ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳԻՐ 1821—1829 ԹԹ. ՀՈՒՅՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանում պահվում է հույների 1821—1829 թթ. ապստամբության սկզբնական շրջանին վերաբերող շատ հետաքրքրական մի ձեռագիր (N 779, հատված 28, թղ. 201 բ—215 ա)։ Այն ունի պատմական և փաստագրական բարձր արժեք՝ գրված լինելով դեպքերի ժամանակակցի և ականատեսի կողմից, գեղեցիկ և հուզական լեզվով, ընդլայնելով մեր պատկերացումները Օսմանյան կայսրության հպատակ բրիստոնյա ժողովուրդների իրավազուրկ և ծանր կացության մասին։ Ձեռագիրը կարևոր սկզբնաղբյուր է՝ հույն ժողովրդի ազատագրական պայքարի սկզբնավորման, դրան անմիջապես հաջորդած Կ. Պոլսի հայերի և հույների դեմ սանձազերծված բռնության ու կոտորածների, հունական Քիոս կղզու բնակչության 1822 թ. ջարդի վերաբերյալ։

Պետք է խոստովանել, որ մեզանում նոր շրջանի հայ-հունական հարաբերությունները և մասնավորապես 1821—1829 թթ. հունական ապստամբության հայկական արձագանքները դրեթե չեն ուսումնասիրված։ Կարելի է հիշատակել միայն Մ. Ն. Հակոբյանի աշխատությունները, որոնցից միայն մեկի մեջ, այն էլ թռուցիկ կերպով, շոշափվում է ժամանակի հայ հասարակության և պարբերական մամուլի (Կալկաթայի «Շտեմարանի») վերաբերմունքը Հունաստանի ազատագրման հանդեպ[1]։ 1971 թ. Ս. Քոլանջյանը հրապարակեց մի շարք կարևոր վավերագրեր 1821 թ. բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման մասին, որոնց մեծամասնությունը Ռեսարաբիայի հայոց թեմակալ առաջնորդ Գրիգոր արք. Զարբությանի նամակներն են Քիշնևից, որն այն ժամանակ հունական ազատագրական շարժման գլխավոր կենտրոններից մեկն էր[2]։

Ներկայացվող «Պատմութիւն ապստամբութեան Պուղտանու Պէյին, և անցից Յունաց»-ը մեկ հատվածն է XIX դարին պատկանող «Հավաքածոյի», որի գրիչը, կազմողը. տեղն ու տարը, ըստ Մխիթարյան Մատենադարանի ձեռագրերի ցուցակի, անհայտ են։ Դատելով ձեռագրի բովանդակությունից, այն Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի դիվանից ընդօրինակված ամենատարբեր պատմական և դավանաբանական վավերագրերի հավաքածո է, որն ընդգրկում է 1762—1844 թթ. ժամանակաշրջանը։ Կարելի է ենթադրել, որ «Հավաքածոյի» գրիչն ու կազմողն է հայ անվանի պատմաբան և եկեղեցական գործիչ, «Պատմութիւն Հայոց, 1772—1860» (Կ. Պոլիս, 1871) հատորի հեղինակ Ավետիս վարժապետ Պերպերյանը, որը, իր իսկ վկայությամբ, Պատրիարքարանի դիվանում երկար ժամանակ զբաղեցնում էր քարտուղարի պաշտոնը։ Ահա թե ինչ է գրում Ա. Պերպերյանը իր «Պատմութեան» առաջաբանում. «Իսկ մինչ ի 1812 ամին դէպ եղեւ մեզ մտանել պաշտօնիւ փոքրաւորութեան առոտս Յովհաննու պատրիարքի Կոստանդնուպօլսոյ, որ հրաժարեալ ի պատրիարքութենէն նստէր յԻսրիւտար ի վանս սուրբ Երուսաղէմի (որ այժմ Ճեմարան ասի), տեսեալ զսէր եւ զբաղձանս մեր առ սէր պատմութեան ազգիս, հրամայեաց մեզ զժամանակակից դէպս պատմութեան ազգիս շարակարգել պարզ շարադրութեամբ. եւ զանցեալ դէպսն ինքն իսկ պատմէր բանիւ բերանոյ եւ առաջի իւր տայր դրել։ ...Յետ մահուան Յովհաննու պատրիար-

---

[1] М. Н. Акопян. Освобождение Греции и армянская общественная мысль.— В кн.: Центральная и Юго-Восточная Европа в новое время. М., 1974, с. 150—157.

[2] *Ս. Քոլանջյան, Հայերեն նորահայտ վավերագրեր բալկանյան ժողովուրդների 1821 թ. ազգային-ազատագրական շարժումների մասին.—Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 3, էջ 329—338։*

[3] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ։ Կազմեց Հ. Համազասպ Ոսկեան. Վիեննա, 1963, էջ 329—338։*

քին (1817 թ.—Ա. Հ.) որ ինչ անցք եւ դէպք պատահեցան յաւուրս պատրիարքութեան Աբրահամու, Պողոսի, եւ Կարապետի, քաղեցաք յընդարձակ դիւանէ պատրիարքարանին, ղորս եւ աչօք իսկ տեսեալ էր մեր. բայց ի նմա արձանագրեալ էին նամակք, վճիռք. եւ ժողովք, եւ ստորագրութիւնք եկեղեցականաց եւ աշխարհականաց. ափսո՜ս, զի այս գեղեցիկ դիւանն այրեցաւ ի հրդեհին Հօճա փաշայի յաւուրս Կարապետ պատրիարքի...»։ Մեր ենթադրությունը հաստատվում է նաեւ «Հավաքածոյի» եւ «Պատմութեան» համեմատությամբ։ Իր «Պատմութեան» մեջ Պերպերյանը մեծ չափով է օգտագործում այն վավերագրերը, որոնք նախապես նա կրկնօրինակել էր Պատրիարքարանի դիվանից։

Շատ հավանական է, որ հենց ինքը՝ Պերպերյանը, նաեւ ձեռագրի հեղինակը լինի։ Համենայն դեպս, նրա «Պատմութեան» մեկ ամբողջ գլուխ (ԼԲ) նվիրված է հույների ապստամբության շրջանին[5], իսկ նա նշված տարիներին գտնվում էր Կ. Պոլսում[4], լինելով ներկայացված դեպքերի անմիջական ականատեսը։

Որքան մեզ հայտնի է, ներկայացվող հրապարակումը վերոհիշյալ ձեռագրի առաջին գիտական հրատարակությունն է։

Մենք ջանացել ենք առավելագույնս պահպանել ձեռագիր բնագրի բոլոր առանձնահատկությունները։ Հապավումները բացված են՝ անձնանուններիս և տեղանուններից բացի, նպատակահարմար գտանք մեծատառով գրել նաեւ ժողովուրդների և եկեղեցական տոների անունները։ Ձեռագրին կցվում է օտար (հիմնականում թուրքերեն) տերմինների և տեղանունների բառարան։

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Վիեննայի Մխիթարյան միաբանության ժողովրդապետ հ. Վահան վարդապետ Հովակիմյանին ձեռագիրը մեզ տրամադրելու և պատճենահանելու թույլտվության համար, ինչպես նաեւ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հ. Բարթիկյանին, բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Հակոբյանին և պատմական գիտությունների թեկնածու Մ. Ռոշլյանին՝ իրենց օժանդակության համար։

Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ապստամբութեան Պուղտանու Պէյին, եւ անցից Յունաց։ Յամի Տեառն 1821, մարտի 1

Յաւուրս թագաւորութեան Տաճկաց Բ Սուլթան Մահմուտի[1], եւ 'ի հայրապետութեան Տեառն Եփրեմայ Սրբազան Կաթողիկոսի[2], եւ 'ի Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ, Տեառն Պողոսի Արքեպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ[3], Միխալ անուն ոմն Յոյն[4] 'ի դրունս տէրութեան տիւան թէրճիմանի գոլով, եւ ապա ըստ շուրութի յաջորդութեանն, պէյութեան Պուղտանու ընկալաւ զիշխանութիւն։

Արդ սա մինչ 'ի Կոստանդինուպօլիս տիւան թէրճիմանի էր, ունէր 'ի մտի ապստամբել 'ի տերութենէն եւ ինքնիշխան լինիլ, վասն որոյ զրազումս շահեալ էր 'ի սոյն միտս, եւ 'ի սոյն խորհուրդս լինիլ կողմնակից եւ աջակից ինքեան, բայց ո՜չ կաբէր առնել ինչ 'ի յարքայանիստ մայրաքաղաքիս։

Այլ երբ խորագիտութեամբ իւրով, եւ միջնորդութեամբ ոմանց երեւելի խորհրդականաց տէրութեան՝ յաջողեցաւ եղեւ Պէյ Պուղտանու, պատուեցաւ յարքայէն փառօք ըստ օրինի իշխանութեան, եւ 'ի գնալն անդր ժամ դի-

---

4 Ա ւ ե տ ի ս Պ է ր պ է ր ե ա ն. Պատմութիւն Հայոց. Կ. Պոլիս, 1871, էջ 6—Զ։

5 Նույն տեղում, էջ 171—177։

1 Մահմուդ Բ (1785—1839), Օսմանյան կայսրության սուլթան (1808—1839)։

2 Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմ Ա Զորագեղցի (1809—1830)։

3 Պողոս Ադրիանուպոլսեցի, Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսո (1815—1823)։

4 Միխայիլ Սուցու (1792—1864), իշխան Մոլդովայի (12 հունիս 1819—29 մարտ 1821), հարեց ապստամբությանը։ Նրա դերը ապստամբության կազմակերպման գործում չափից ավելի է ընդգծվում հայ հեղինակի կողմից։

պող դտնալ, զոր երկներն 'ի մտի 'ի բազում ժամանակս՝ ծնանէր, եւ զբնակիչս կեղեքեալ անիրաւ հարկապահանջութեամբ զբազում ինչս հաւաքեալ, եւ դմթերս ոսկւոյ եւ արծաթոյ բաղմացուցեալ, եւ զտարեկան սակն արրունի ոչ առաքէր եւ առ ինքն կուտէր, եւ զրազում զունդս Յոյն զօրաց դումարէր եւ պատրաստէր։

Ու յետ իբր երկուց ամաց պէյութեան իւրոյ 'ի մտի եղեալ զգաղտնի ապստամբութեան չար խորհուրդն ակներեւ 'ի վեր հանէր առ իւրայինս, եւ առ այլ համախոհ պէյդատէս թուղթս եւ գիրս առաքելով 'ի Կոստանդինուպօլիս եւ թէ յայլուր, ծանուցանէր նոցա թէ այս ինչ օր ամսոյ ունիմ 'ի մտի բազմութեամբ զօրօք գրոհ տալ, եւ զրաւել զքաղաքն Կոստանդինուպօլիս, եւն., եւ դուք եւս պատրաստ լերուք ըստ խորհրդեան մերում, զոր ինչ պէտք են առնել՝ արարէք։

Արդ՝ եւ նոքա ընկալեալ դթուղթս զայսոսիկ վստահացեալ 'ի կարի խորագիտութիւն Միխալին ըստ նախկին գաղտնի խորհրդոցն իւրեանց, ինքեանք եւս 'ի քաղաքիս ընդ իւրայնոցն՝ եւ ընդ ոմանս պէյզատէս եւ ընդ վաճառականս խորհրդակցեալ, թէ 'ի մէջ քաղաքիս և թէ 'ի շրջակայս ամենայն պատրաստութեամբ պատրաստեալ զորոգայթադիր հնարս, զի 'ի ժամադրեալ սահու առ հասարակ յայտնեսցեն, եւ 'ի մեծ վտանգի ձգեալ զբոլոր բնակիչս դրավեսցեն զքաղաքն եւ զթագաւորութիւնն։

Բայց զայսոսիկ՝ զոր խորհէին եւ պատրաստէին, 'ի բնաւից զանխուլ առնէին, եւ ո՞չ ոք գիտէր, բայց միայն ինքեանք, եւ համայն խորհրդակիցք իւրեանց։

Այսու յետ աւուրց Քալիմաքի Իսկէոլէթն[5] Պէյ Պուղտանու լեալ էր յեօթն ամս եւ աղլ եղեալ նստեալ էր ձեռնունայն 'ի տան իւրոյ 'ի Կոստանդինուպօլիս; եւ եղեւ 'ի մեռանիլն ծերունի Սուչօ Պէյին Ուլահու[6], պէյութեան խաֆտանն զգեցաւ յաւուրս յայսոսիկ, որոյ եւ փոքր եղբայրն Քալիմաքի Իվան՝ որ տիւան թէրճիմանի էր 'ի դրունս տէրութեանն, նախապէս իմացեալ զապստամբութիւն Միխալին 'ի Պուղտան, եւ զգաղտնի քրթմնջիւնս կոդմնականացն 'ի Կոստանդնուպօլիս, ծանոյց չավուշ պաշիին թէ՝ Միխալն ապստամբեալ է 'ի Պուղտան, եւ բազմութեամբ զօրօք սպառազինօք դիմեալ եկեալ է 'ի Ղալաս. եւ անդ զբնակիչս անպատրաստի գտեալ զՀայս եւ զայլազգիս 'ի բերան սրոյ կոտորելով՝ գրաւեալ է զքաղաքն; նոյնպէս եւ նախկին 'ի ժամանակս Ռուսաց պատերազմին ապստամբեալ եւ փախուցեալ Իփսիլանդի պէյի որդի Ալէքսանդրն[7]. եւ նա եկեալ ընդ նմա 'ի միասին դկոդմանս Պուղտանու եւ 'ի շրջակայ տեղիս Յոյն զօրօք, հարկանեն զքաղաքս եւ գրաւեն, եւ զընդդիմակացսն առ հասարակ 'ի բերան սրոյ կոտորեն, եւ ունին զկոդմնականս բաղումս աստ եւ անդ եւ յամենայն տեղիս, տեսէ՛ք սորին զհնարն, եւն։

Իսկ իբրեւ լուաւ զայս ընդ թէրճիմանին մտեալ առ եպարքոսն ծանուցին նմա զիրն, որ եւ կոչեալ զքաբու քեահէասիսն Պուղտանու, եհարց նոցա թէ ստո՞յգ է, զոր ինչ ասէ տիւան թէրճիմանին, որք եւ ուրացան եւ պատճառելով զպատճառս ասացին՝ թէ մեք տէրութեանն հաւատարիմ ծառայ եմք, բայց թէրճիմանն զայս վասն այսորիկ ասէ՝ զի խռովութիւն

---

5 Սկաոլատ Կալիմաքի, երեք անգամ եղել է իշխան Մոլդովայի (1806, 1807—1810, 1812—1819) և մեկ անգամ, իր կյանքի վերջում, իշխան Վալախիայի 1821 թ. փետրվարից՝ հունիս (նշանակվել է, սակայն փաստորեն չի գրավել իշխանական աթոռը)։

6 Վալախիայի մահացած իշխանը Ալեքսանդր Սուցուն էր (1758—1821), որը եղել էր մեկ անգամ իշխան Մոլդովայի (1801—1802) և երեք անգամ իշխան Վալախիայի (1802, 1806 և 1818—1821, մինչև հունվարի 19-ը)։

7 Ալեքսանդր Իպսիլանտի (1792—1823), 1821 թ. Մոլդովայում և Վալախիայում ապստամբության առաջնորդ։ Նրա հայրը՝ Կոնստանտին Իպսիլանտին Մոլդովայի (1799—1801) և Վալտխիայի (1802—1807) իշխան էր։

յարուցէ 'ի քաղաքիս, քանզի ունէր 'ի մտի լինիլ պէյ Ուլահու, եւ 'ի լինիլն եղբօր իւրոյ՝ զչարեցաւ սա, եւ այսպիսի զրպարտութիւնս հնարի, թերեւս լափշտակեսցէ զպէյութիւնն, եւն., եւն., ասելով՝ պարտաւորեցին զտիւան Թէրճիմանին, վասն որոյ բարկացեալ տէրութիւնն՝ աքսորեաց 'ի Կեսարիա իբր խռովիչս, եւ զՄօրոզ[8] պէյի երէց որդին տիւան Թէրճիմանի արար, եւ դչավուշ պաշին եւս ազլ արարեալ զարպհանէ էմինին կացոյց ի տեղի։

Իսկ յետ երկուց աւուրց հասանելոյ բանքս այսոքիք յականջս տէրութեան քաբու քեահեասին Պուղտանու, որ էր եղբայր Միխայիլին, նոյնպէս եւ նախ փախուցեալ 'ի յԻտալիա Խարտճայ պէյին երէց որդին, որ աներձագն էր Միխայիլին, եւ Խանչէրլի պէյն եւ եղբայրն եւ ըՍքինիայն[8], եւ այլ բազումք եւ քանի քանի պօյարք առ հասարակ ընտանեօք եւ որդւովք, կահիւք եւ կարասեօք իբր աւելի քան զեօթանասուն անձինս այր եւ կին, 'ի գիշերի գաղտագնաց եղեալ փախեան, եւ զտունս եւ զապարանս իւրեանց դատարկ թողեալ էին։

Եւ զայս փախուստ նոցա իբրեւ լուաւ տէրութիւնն, զարթուցեալ որպէս 'ի քնոյ, ծանեաւ զնենգութիւնս նոցա, եւ վաղվաղակի յամենայն կողմունս՝ եւ յամենայն ճանապարհս զարս առաքեաց զհետ պնդիլ փախուցելոցն, եւ դտանել եւ կալնուլ, որք եւ գնացեալ 'ի բազում աւուրս ո՛չ զոք գտին 'ի փախստէիցն, բայց միայն գսուրհանդակ զոմն կալեալ 'ի ճանապարհին, որ գայր 'ի կողմանէ Պուղտանու Միխալ պէյին, բերել թուղթ առ համախոհս նորին, զոր ածեալ առ դուռն տէրութեան, առին զամենայն թուղթս, եւ զամենայն գիրս, եւ ընթերցեալ ծանեան, թէ ո՞յք ոմանք 'ի սոյն ապստամբութիւնս են խորհրդակից, եւ իրազգած, որք էին Սքանավին, եւ որգին, եւ փեսայն, որ Լողոֆէթն էր Յունաց, եւ այլ ոք, եւ քանի վաճառականք գլխաւորագոյնք, եւ Եփեսոսի տեսբօթն, եւ Իզնիմիաի տեսբօթն, եւ Թառապիայու տեսբօթն, եւ այլք բազումք երեւելի անձինք, զորս կալեալ իջուցին 'ի կալանս մահապարտաց 'ի ներքին բանտն 'ի Պօստանջի պաշին։

Եւ յետ աւուրց բացին զտունս թէ կապելոցն թէ փախուցելոցն, եւ գտին զզէնս բազումս ժողովեալս, եւ զանազան թուղթս դրեալս, թէ 'ի Պուղտանս առաքելի, եւ թէ յայլուր, եւ 'ի կղզիս Սպիտակ ծովու, եւ թէ 'ի Պուղտանէ եկեալս. զորս ընթերցեալ մի ըստ միոջէ յայտնեցաւ խորամանկութիւն նոցա, եւ գտին 'ի նոսա զրեալ թէ՝ զամենայն ինչ պատրաստեցաք 'ի քաղաքիս եւն., եւն., թէ չեմք մեք միայն առանձին քանի անձինքս, այլ բոլոր Յոյն ազգն, եւ յամենայն տեղիս ուր ուրեք եւ իցէ՝ 'ի սոյն խորհրդեան համահաճ եւ միախորհուրդ եմք, եւ սպասեմք գալստեան ձերոյ, զի միաբանութեամբ առցուք զքաղաքս, եւ զթագաւորութիւնս եւ զհայրենիս։

Այր վասն 'ի նմին աւուր զՍքանավին եւ զորդին եւ զփեսայն, եւ զթրդթաբեր սուրհանդակն, եւ զայլ մի ոմն, զհինգ անձինս՝ գլխատեալ, զզեստուք իւրեանց ալ խալբախով եւ դեղին մեստով, եւ այլ ամենայնիւ զերիս աւուրս թողին զգէշ նոցա 'ի փողոցին 'ի Պարմախ խաբուն՝ եւ յայլուր սպանութեան տեղիսն. եւ այնուհետեւ զմարմինս նոցա 'ի ծով ընկեցին։

Բայց տէրութիւնն իբրեւ գիտաց թէ բոլոր ազգն Յունաց միակամ եւ համախոհ իցեն 'ի սոյն ապստամբութեան խորհուրդս, հրաման եւ զօրաց իւրոց առ հասարակ մեծաց եւ փոքունց զզէնս զզենուլ, եւ յամենայն թաղս Յունաց, եւ յամենայն փողոցս Պոլսոյս, եւ 'ի Ֆէնէռի կողմն, ուր Յունաց բազմութիւն է, արթնութեամբ զգուշանալ զտիւ եւ զգիշեր. եւ ուր ուրեք եթէ տեսցեն՝ թէ երկու կամ երեք Յոյնք ժողովեալ խօսակից լինիցին, անդէն անխնայ պատժեսցեն. վասն որոյ բոլոր այլազգիք սպառաղինեցան, եւ զտիւ եւ զգիշեր զգուշանային, թէ մի՛ գուցէ 'ի տան, եւ կամ 'ի տեղիս ինչ ժողովեալ ապստամբութիւն խորհեսցին։

Եւ եւս արք արքունիք ծպտեալ զզեստուք զբոլոր քաղաքն շրջէին, թէ մի՛ լինիցի խօսս կամ բանս գաղտնիս խօսեսցին Յոյնք, եւ կամ զմիմեանս

---

8 Մուրուզի, Քարաջա, Խանչերի, Սքինաս—ֆանարիոտների հայտնի ընտանիքներ։

յորդորեսցին յապստամբութիւն, եւ ուր ուրեք տեսանիցեն զայնպիսին կալնուցուն։

Նմին իրի մարտի Ժ [10] յարքունուստ պուլրուլթու եկն առ Սրբազան Պատրիարքն որ ունէր օրինակ գայս. թէ Հայք եւս թէ 'ի տան՝ թէ 'ի փողոցի եւ յայլ տեղիս քանի անձինք 'ի միասին եկեալ մի՛ խօսեսցին ինչ զիրացն եղելոց, եւ եթէ գիտեն թէ յուրեք այսպիսի խռովութիւն յարուցանող եւ յապստամբութիւն յորդորող գրս, կամ գթուղթս գրեալս, եկեսցեն ազգ արասցեն տէրութեան, եւ եթէ ոմանք գիտեն եւ թագուցանեն զայնպիսիսն՝ 'ի լսելն մեր մահուամբ պատժեմք, եւն։

Իսկ Սրբազանն տեսեալ զայս օրինակ սաստիկ պուլրուլթուն վաղվաղակի 'ի 11 մարտի լրութեամբ ազգային ժողով արարեալ 'ի Մայր եկեղեցին՝ կոչեաց զրոլոր յարգի ամիրայս, ե՛ւ զիւրաքանչիւր էնաֆի գլխաւոր անձինս, եւ ընթեռնուլ նա յատենի զպուլրուլթուն, եւ ամենայնքին լուեալք ասային. «մեք տէրութեան ընդ թշնամիսն թշնամի եմք, ընդ բարեկամսն բարեկամ, մեք եւս քինախնդիր եմք ըստ ամենայնի ապստամբաց տէրութեան, եթէ առ ումեք թուղթ, կա՛մ գիր լինել ստուգեսցուք, վաղվաղակի ազգ արասցուք տէրութեան. զի ինչք մեր եւ ստացուածք, որգիք մեր եւ ընտանիք թագաւորին մերոյ են, որովք եւ ծառայեմք նմա, եւ ծառայեսցուք մինչեւ ցյաւիտեան», եւն.։

Եւ այդա ըստ բանիս այսմիկ թագրիր արար Սրբազանն տէրութեան, թէ ազգ մեր՝ ազգ Հայոց հաւատարիմ է տէրութեան, եւ ամենայն ակնարկութեանց հպատակ, եւ մինչեւ 'ի մահ ծառայ թագաւորութեանդ, եւն., եւն., որ այս թագրիրս ձեռամբ բէիզ էֆէնտիին եհաս առ արքայն, եւ տեսեալ նորա զփոյթ՝ եւ զհաւատարիմ եռանդս հոգւոյ Հայոցս աղդի առ ծառայութիւն տէրութեան իւրոյ՝ կարի հաճեալ է, եւ այս պուլրուլթուի մտօք յամենայն տեղիս եւ յամենայն առաջնորդս դիր եւ կոնդակ առաքեաց, զորոյ օրինակն տե՛ս յառաջոյ։

Բայց հրդեհ ապստամբութեան Միխայիլն եւ իւրայնոցն հասեալ առ ամենայն վայրս, վեր 'ի վայր տապալէր, եւ մանաւանդ կողմն Ռումէլիի. եւ խռովեալ վրդովէր ամենեցուն զլսողաց զսիրտս, եւ շշունջ տագնապաց զրաղաքս առ հասարակ տագնապէր, եւ մանաւանդ տէրութիւնն գլխովին վրդովեալ էր, զի իսկ այսու պատճառաւ զդլխաւոր նախարարս դրան արքունի, զշեյխ իսլամն եւ զվէզիրն, զքահեայ պէյն եւ զրէիզ էֆէնտին, եւ զշտվուշ պաշին, զզարպխանէ էմինին, որպէս պատմեցաք 'ի վերոյ, զթէրսխանէ էմինին, եւ զարութխանէ էմինին, եւ զտիւան թէրճիմանին որպէս եւ ասացաք, յորոյ զոմանս աքսորեալ, եւ զոմանս աղիլ արար, եւ ոմանց կրկին զպաշտօնս փոխեաց, եւ զամենայն պաշտօնատարս տէրութեան իւրոյ զարթոյց, իւրաքանչիւրոց զմոլութիւնս առ երեսս ածեալ, առաքելով առ նոսա՝ եւ առ բոլոր մզկիթս, եւ առ աղա խարուսին եւ առ օճախս եէնիչէրեաց եւ առ շուկայս եւ առ պէզէստէնս խառդիշէրիֆս այսու մտօք, թէ ո՛վ ոք տինիսլամ է, եւ հաւատարիմ է տէրութեանս, իրացս եղելոց վրէժխնդիր եղիցի, եւ իւրաքանչիւր արիացի, զգէն զգեցցի, եւ ով ոք չունի գնեսցէ, եւ որնտանի թշնամին ոտանել ցանասցի եւն.։

Լուեալ այլազգիք զսաստիկ հրամանս վառեցան ոգւով վրէժխնդրութեան, եւ զհետ մտեալ այսր եւ անդր գտանէին օր աւուր զՅոյնս՝ զոմանս չավուշի կերպարանօք, զոմանս թաթարի կերպարանօք, զոմանս մօլլայի, եւ զոմանս փաշայրի, եւ զոմանս պօստանճիի, 'ի ներքուստ ընդ զգեստուք սպառազինեալք։

Եւ եւս գտին 'ի թուղթս դրեալս թէ՝ որքան եւ պախալք եղեն 'ի Կոստանդինուպօլիս, խորհրդով 'ի միում գիշերի միահաղուն, 'ի կրպակս իւրեանց հուր եդեալ այրեալոց են հանդերձ ընչիւք, զի 'ի լինիլ տագնապաց մեծի եւ վրդովմանս. եւ 'ի լառնել ռաղաքին յոտին, եւ ոնդ զբաղիլն ամենեցուն 'ի շիջուցանել զհրեհն. ժամ պարապ գտեալ Յոյնք, ոմն զթէրսխա-

նէն բազմութեամբ գրաւելոց է, եւ ոմն զթօփխանէն, եւ այլ ոմն զպարութ-
խանէն, եւ զճէպխանէն, եւն.։

Եւ սու եօլճիք Ցոյնք Էյրի խաբուի 'ի միում աւուր խառնելոց են զթոյնս
'ի ջուրն Կոստանդնուպօլսոյ, յորս գտին զերիս վառօլս լցեալ թունօք, զի
բնակիչք բաց 'ի Ցունաց արբեալք հազարաւորք անձինք, անդէն թունաւո-
րեալ մեռանիցին 'ի միում աւուր, եւ այսպէս զանազան ոճիրք եւ նենգու-
թիւնք նոցա 'ի յայտ եկեալ, վասն որոյ կալան զամենայնսն եւ եդին 'ի
բանտի։

Եւ ապա սկսան արք արքունիք 'ի կողմանէ տէրութեան 'ի խանս 'ի
սենեակս սենեակս շրջիլ եւ զէնս որոնել, ուր եւ գտանէին առնուին, եւ 'ի
ճէպխանէն տանէին եւ հաւաքէին, եւ զսենեակն եւ բնակելոցն 'ի նմա զա-
նուանս ամենեցուն գրէին, եւ միմեանց ջէֆիլ առնէին։

Ուստի առ Սրբազանն եւս մարտի 16. կրկին պույրուլթու եկն յարքու-
նուստ՝ որ ունէր օրինակ զայս. թէ ուրախացոյց զթագաւորն նախկին հա-
ւատարմութեան թագրիրն ձեր բանիւ. արդ ցուցէք եւ զնոյն գործով, զի
աստի մինչեւ ցտասն օր, ո՛վ ոք ունի զզէնս բերցէ 'ի Պատրիարքարանս, եւ
անտի 'ի տէֆտէրխանան, եւ իւրաքանչիւր զինուց ըստ արժողութեան տա-
ցուք զգինսն, եւն., զորս եւ ժողովելոցն միւպաշիր եկեալ 'ի դրանէ խօճա-
կեան մի եւ քեաթիպ, եւ քարու քեահեասի մի, եւ երեք հառպաճիք։

Իսկ Սրբազանն ժողովելով զկարգաւորս եւ զամիրայս եւ զէսնաֆս՝ ծա-
նոյց ամենեցուն զայս պույրուլթուս՝ թէ ով ոք զէնս եւ էլութե հարպի ունի-
ցի՝ բերցէ, որ եւ յիւրաքանչիւր կողմանց ո՛վ որ ունէր զզէնս, զթիւֆէնկ,
զբիշտով, զսուր, զթուր եւ զսուսեր, բերեր 'ի Պատրիարքարանս, եւ անտի
ձեռամբ միւպաշրրին տանէին 'ի Դուռն՝ եւ ըստ արժողութեան առնուին
զգինն։

Իսկ 'ի լրանալ տասն աւուր՝ պույրուլթու մի եւս եկն մարտի 21. 'ի
յարքունուստ, 'ի Գալատեան Կիւրակէի Մեծի Պահոց, որ ունէր օրինակ
զայս. թէ այն եկեալ զէնքն ոչինչ են, զի ոմանք խորտակեալ եւ ծակոտե-
ալ, եւ յոչինչ պէտս համարեալք են. զնորագոյնս պահեաց ազգն ձեր, եւ
զհնագոյնն առ մեզ առաքեաց, վասն որոյ գիտասջի՛ք զի յետ երկուց աւուրց
'ի յորոնել արքունական արանց տանէ 'ի տուն, եւ 'ի սենեկէ 'ի սենեակ,
եւ 'ի խանութէ 'ի խանութ, 'ի զտանելն մօտ ումեք զզէնս թագուցեալս, ան-
դէն մահուամբք կարճելոց եմք զայնպիսին 'ի կենաց եւն., եւն.։

Իսկ Սրբազանն 'ի լինելն աւուր կիւրակէի, ոչ կարելով անդէն վաղվա-
զակի ժողովել զազգս եւ ծանուցանել զհրամանն տէրութեան, ինքն հեծեալ
'ի ձի գնաց անձամբ 'ի կիւրակէ ցերեկին 'ի Սամաթիա, եւ ժողովեալ զա-
մենայսն յեկեղեցիս պատուիրեաց նոցա ըստ հրամանի տէրութեանն, եւ
ապա 'ի յերեկոյեան ժամուն 'ի Պալատ յեկեղեցին, եւ նոցա եւս ծանոյց,
եւ անտի եւս անցեալ 'ի Խասգիւղ, յերկուշաբթի առաւօտուն յեկեղեցին ծա-
նոյր ամենեցուն զհրամանս տէրութեան, եւ անտի անցեալ 'ի Ղայաթիա
յերեքշաբթի առաւօտուն, յեկեղեցին ծանոյց եւ նոցա զհրամանն, եւ այլ
ամենայն տեղեաց զվարդապետս կոչեալ պատուիրեաց նոցա ծանուցանել
յեկեղեցիս իւրեանց զսաստկութիւն պույրուլթուին, եւ նոցա եւս խօսեալ
լատենի. զոր ինչ եւ գտին առաքեցին 'ի Պատրիարքարանն, եւ անտի 'ի
Դուռն։

Բայց տէրութիւնն զսպայակոյտ բազմութիւն զօրաց իւրոց իբր հինգ
հազարս՝ առաքեաց ապրիլի 5. նաւու 'ի Սեւ ծով երթալ ելանել 'ի Վառ-
նա, եւ գնալ յերկիրն Պուղտանու 'ի նուաճել զապստամբութիւն Միխալին
եւ համախոհից նորին, եւ աստի եւ անտի զոմանս փաշայս առաքեաց
ծանր զօրօք գնալ 'ի սահմանաղուխս եւ բանակիլ եւ զդէմ ունիլ յարձակ-
մանց ապստամբաց, սակայն 'ի Կոստանդնուպօլիս եղեալ աղէտալի հա-
րուածք չկարեմք բանիւ պատմել, այլ փութամբ սակաւու ղրաղումս յայտ
ածել ընթերցողացդ։

Քանզի ռամիկ զօրքն սկսան արձակերասան եւ համարձակ՝ զորս կամեցան յանցաւոր եւ առանց յանցանաց՝ մերկել եւ կողոպտել, զի նախ 'ի մահ ունէին եւ ո՛չ կարէին. զի 'ի մեծամեծաց երկնչէին, այժմ նոյն մեծամեծք հրաման նոցուն եւնել ընդ Յոյնս ապստամբս՝ զոր ինչ եւ կամին։

Իսկ նոքա ռամիկք ղՀայ եւ զՅոյն ո՛չ ճանաչէին, եւ ոչ իսկ կարեն ճանաչել եւ ոչ որոշել, այլ ընդ հնազանդս եւ ընդ Յոյնս միօրինակս վարէին եւ առնէին, թէպէտ երբեմն Հայոց խնամս տանէին եւ գովէին՝ թէ սատրքանէ բայեա տրրլար էրմէնիլէր, բայց ընդ Յոյնս անխիղճ վարէին թշնամանօք եւ քամահանօք, եւ այն մանաւանդ ռամիկ զօրքն, զի զտիւն ողջոյն եւ զդիշերն ողջոյն խումբ խումբ եղեալ յամենայն փողոցս շրջէին, եւ փիշտովս եւ թիւֆէնկս ձգէին շարունակաբար, մինչեւ 'ի շկահիւն ձայնիցն անհանգիստ լինել լսելեաց, եւ ոչ առնուլ բնաւ զբաղում գիշերս զճաշակ բնոյ, եւ մարդ եւ գապիթք չէին՝ որ արգելուլ կարէին զնոսա, թէպէտ ուոտայր եւ օրթայք յամենայն տեղիս եւ յելս ճանապարհաց կացուցան 'ի պպուշանալ, սակայն եւ նոքա տեսեալ զբիրտ վարս զինուորելոցն՝ զանց առնէին, զի զոր ինչ կամին միանգամ, արասցեն, որպէս եւ իսկ արարին։

Որպէս եւ յապրիլի 1. նոյն սրիկայք գնացեալ բազմութեամբ արտաքոյ քան դպարիսպն Կոստանդնուպօլսոյ 'ի կողմն Սիլիվրի գաբուին՝ իբր մոռնալ մի 'ի բացի եղեալ Պալրբիր Այազմասին, Զօտտոխոս բիյի անուանի ուխտատեղին Յունաց[9], որ յանուն Սուրբ Աստուածածնի կառուցեալ մատուռն բանդեցին բլուցին առանց տէրութեան հրամանի, եւ ղշրջապատ պարիսպն 'ի հող հաւասարեցին, եւ դռպաս սրբութեանն հրով այրեցին. եւ տեղեակ արարին գտեպին։

Վասն որոյ մեծ երկիւղիւ պաշարեալք ամենեքին կասկածելով այլ եւս դանագան ապստամբ պատահարաց, ոչ ոք կարէր զդրամբ արտաքս ելանել, եւ էր Աւագ Շաբաթ Սեծի Զատկին, նմին իրի եւ յեկեղեցիս ամենայն ոչ ոք կարէր գալ եւ զնալ 'ի պաշտաման ժամուն, եւ ամենայն ժամերգութիւն յորդոր ասէին, եւ ամենայն յայդէպաշաւն 'ի ծագել աւուրն սկսանէին, եւ փութով ելանէին, որպէս եւ Աւագ Ուրբաթ աւուր պաշտօնն 'ի լուսանալն սկսեցին, եւ 'ի ժամ երեքին արձակեցին։

Իսկ 'ի Զատկի առաւօտուն յայս բազմամարդ եկեղեցիս Սուրբ Աստուածածնի՝ որ ինոյր ժողովրդոք մինչ 'ի բեմն սուրբ, ոչ ոք եկն. գրեթէ երկու եկեղեցին իբր հարիւր կամ աւելի անձինք եկին, բայց կանայք բնաւ ոչ՝ ո՛չ պառաւունք եւ ոչ աղջկունք՝ զի երկնչէին, թէպէտ զմեծ դուռն Սուրբ Եկեղեցոյս չորս նէֆէր զինուորեալ եւ եամախճին պահէին, նմանապէս եւ Յունաց Եկեղեցեաց զդրունս բազմութեամբ էնիչէրիք նէֆէրք պահէին զպուշացեալ յերեսաց սրիկայիդն, սակայն եւ երկիւղն անհնարին պաշարեալ էր զամենայնին, եւն.։

Իսկ արք արքունիք՝ որք յամենայն տեղիս սփռեալ շրջէին ծպտեալ կերպարանօք օրէ յօր, նոր 'ի նորոյ զՅոյնս գաղտնի ապստամբս գտեալ 'ի բանս արգելուին, եւ աւուրց յաւուրս դերիուս եւ դերիս 'ի զանազան թաղս Կոստանդինուպօլսոյ եւ 'ի շրջակայս գլխատէին կամ կախէին իւրեանց կերպարանօք, փակեղօք եւ վերարկուօք, որպէս եւ զնոր տիւան թէրճիմա-

---

9 «Եկեղեցիս Յունաց երեւելի է Պատրիարքարանն ի Ֆէնէր, եւ արտաքոյ քաղաքին մերձ ի դուռն Սիլիվրի ի Պալրբիր՝ եկեղեցին Ս. Աստուածածնի, քառակուսի եւ հոյակապ, ի 1830 նորոգ շինեցեալ ի հիմանց, որում եւ կայսրն Ռուսաց ծանրագին նուիրօք նպաստամատոյց եղեւ. անդ է եւ Այազմա (ակն ինքնարուղիս ջրոյ) հռչակաւոր ի վաղ ժամանակաց վասն կարմրախայտ ձկանցն, եւ է մեծ ուխտատեղի Յունաց, ուր ամ ըստ ամէ յառաջին ուրբաթու Սրբոյ Զատկին խուռն բազմութեամբ յաճախեն մեծաւ հանդիսիւ. բաց ի նոցանէ եւ այլք յամենայն ազգաց, ոմանք յուխտ եւ բաղմագոյնք ի դրօսանս եւ ի զնին տեսարանին» (Ղ. Ալիշան. Քաղաքական աշխարհագրութիւն. Վենետիկ 1853, էջ 387)։

նին գլխատեցին, որ ընդ ապստամբսն լինելն նորա խորհրդակից այսպէս եկն 'ի յայտ։

Զի որպէս պատմեցաք՝ աքսորեալ տիւան թէրճիմանի Քալիմաքի Իւվանին մինչ չեւ հասեալ 'ի Կեսարիա՝ լուաւ 'ի ճանապարհին թէ Մօրօզի երէց որդին յաջորդեաց 'ի տեղի իւր, 'ի ժամանելն 'ի յէնկիւրիւ՝ որ առ ճանապարհայն, դառնագին սրտիւ եւ ցաւալից ոգւով պատմէ էնկիւրիւ վալիսի Ռուշտի փաշային թէ՝ թէպէտ մեք ազդեցաք տէրութեան զապստամբութիւնս Միխալին եւ իւրայնոցն, պարտաւոր գտաք առաջի տէրութեանն, սակայն ես հաւատարիմ եմ տէրութեանն. նոյն Մօրօզի որդին՝ որ յաջորդեաց 'ի տեղի իմ, նա եւս ընդ ապստամբացն կամակից է, եւ կնիք տուեալ է զսոյն բանս նենգութեամբ յառաջ տանիլ. գրեա՛ տէրութեանն՝ զի զգուշասցի եւ գիտասցէ։

Իսկ Ռուշտի փաշայն գրեաց տէրութեանն, որպէս եւ պատմեաց թէրճիմանն, բայց մինչ չեւ հասեալ գիրն Ռուշտի փաշային 'ի Կոստանդնուպօլիս, տէրութիւնն եւս առ Սիլիստրէ վալիսին Ֆէրման առաքեալ էր թէ զթղթաբերս եւ թէ զթղթատար սուրհանդակս Ուլահու եւ Պուղտանու՝ որ անցանեն առ սահմանօք քովք, կալեալ առաքեսցես զնոսա աստ հանդերձ թղթով, որոյ եւ 'ի հասանելն հրամանիս դգուշացեալ կալեալ էր 'ի ճանապարհին զթղթաբեր զոմն, յորում գտաւ եւ կնիքն եւ թուղթն Մօրօզի որդւոյն նոր տիւան թէրճիմանին, եւ ընդ հասանելն Ռուշտի փաշային դիրն եւս՝ հաստատեցաւ ապա խորհրդակցութիւն նորին. ուստի եւ ծանուցին զամենայն արքային։

Որ եւ հրաման արար 'ի ներկայութեան իւրոյ գլխատել զնա, զոր եւ գլխատեցին առ դրան Փաշայ խաբուին՝ մօտ 'ի Սօղուկ չէշմէ խաբուսին՝ 'ի ներկայութեան արքայի, որ 'ի Յալայ քէօշկիւն նստեալ էր տեսանել զգլխատումն նորին, եւ զբազում վաճառականսն գլխատեցին, եւ զսու եօլճիսն՝ որք թունաւորելոց էին զչուրն աղբերացն Կոստանդնուպօլսոյ, եւ զնաւարարս, եւ որ աղէտալին է յաւուրս Սուրբ Զատկին, որ ապրիլի 10. յետ արձակման առաւօտեան ժամուն, զՅունաց Ղոռիղորիոս ճգնաւոր ուխտնամեայ ծերունի Պատրիարքն[10] աքսորեցին 'ի Ղատրքէօյ եւ ապա յերեկոյին իբր ժամ ինն, տարեալ կախեցին զմեծ դրանէ Պատրիարքարանին Յունաց, որ 'ի Ֆէնէռ, եւ եդին 'ի վերայ զգիր վնասու։

Ընդ նմին եւ զայլ երիս մետրապոլիտս, զԹառապիայի մետրապոլիտն 'ի Պարմախ խարուն, եւ Եփեսոսին 'ի Քեհատճըլարի Պարմաք քաբուն՝ որ 'ի գլուխն. Մահմուտ փաշային, Իղնիմիտուն 'ի Պալըք փազարն, իւրեանց վեղարօք եւ վերարկուօք եւ սամուրենեօք եւ 'ի մէջս շալ գօտեաւ, եւ զերիս աւուրս 'ի կախարանի մնացեալ՝ ապա զմարմինս նոցա 'ի ծով ընկեցին, բայց Պատրիարքինն կարի անարգութեամբ, զի զՊալատու Հրեայս կալան պահակ, եւ իջուցին 'ի վայր 'ի փայտէն, եւ չուանօք պրկեալ զերկուս ոտս նորին՝ Հրեայք ածելով ընդ քարշ 'ի փողոցսն մինչեւ 'ի Յենիխաբուի արա-

---

10 Գրիգորիոս Ե Անգելոպուլոս (1739—1821)—Պոլսի հույն պատրիարք։ Կ. Պոլսի հույների շարդի գագաթնակետն էր հունական եկեղեցու ուխտնամյա Գրիգորիոսի դաժան մահապատիժը։ Ապրիլի 10(22)-ին, Զատկի օրը, նրան ձերբակալեցին պատարագից հետո և կախեցին Պատրիարքարանի դռներից։ Նույն ճակատագրին արժանացան նաև հույն ուղղափառ եկեղեցու երեք մետրապոլիտներ։ Թուրքերը հետագայում արդարանում էին, որ պատրիարքի մոտ գտնվել էին ապստամբներին ուղղված տասնմեկ նամակներ։ Պատրիարքի դիակը նողկալի ծանակման ենթարկելուց հետո, մոլեռանդ ամբոխը քարշ ավեց նրան թուրքական մայրաքաղաքի փողոցներով և նետեց ծովը։ Դիակը որսացել էին հույն նավաստիները և տարել Օդեսա, որտեղ պատրիարքին թաղեցին մեծ հանդիսավորությամբ։ Սուլթանը նույնիսկ չփորձեց էլ արդարացնել իր արարքը։ Օտար պետությունների դեսպաններին հայտարարվեց, որ պատրիարքը «կասկածելի անձնավորություն էր», և «ըստ երևույթին» դավադիր և ապստամբության հովանավոր (տե՛ս О. Б. Шпаро. Освобождение Греции и Россия (1821—1829). М., 1965, с. 62—63):

լրք իսկէլէսին, եւ անտի եդեալ 'ի նաւակին, եւ ոտին կապեալ վէմ մի մեծ, եւ տարեալ ընկեցին զմարմին Պատրիարքին 'ի ծով, իբր քարընկեց մի հեռաւորութեամբ 'ի ցամաքէն։

Եւ 'ի զիշերի 'ի Թէրսանայի կողմունս գտանեցեալ Յոյնք՝ տեսեալ զդի Պատրիարքին՝ եւ դանկանիլն 'ի ծով հնարիւք իմն կամ կաշառատուութեամբ ոմանց մերձ եղեալ այլազգեաց՝ հանեալ են 'ի ծովէ զդին՝ եւ եղեալ 'ի նաւս իւրեանց, քանզի եւ նաւավարքն Յոյնք զոլով՝ դիմեալ եւ տարեալ են նաւսն հանդերձ 'ի Խօճապէյ, եւ անդ մեծաւ հանդիսիւ, եւ փառաւոր երդարանութեամբ եւ աղօթիւք ըստ օրինի դեր քան զարժանն թաղեալ են։

Ահա այսքան առ այժմ միայն վեր 'ի վերոյ զարտաքին երեւոյթսն իրին պատմելով վերահասու արարաք զսիրելիսդ, բայց որ ներքինն է եւ ապադայ զալոյն Աստուծոյ միայն է դիտելի։

Արդ 'ի դառնադին վիճակիս եւ 'ի տագնապ նեղութեանց աւուրս Սրբազանն ո՞չ դադարէր հանապազօր խրատել զժողովուրդս յատենի, թէ նախ աղօթս արարէք, դի բարձցի չարն 'ի միջոյ, եւ կործանեսցէ Տէր զթշնամիսն տէրութեան, եւ եւս պարկեշտութեամբ կենցաղավարեսջի՞ք ընդ իրեարս, զդնսա ձեր համեստօրէն, վայելուչ բարեձեւութեան Հայոց, եւ գոյն ղդոյն հանդերձս մի՞ լիցի զգենուլ, այլ որպէս Աստուած կամի, եւ տէրութիւնն ախորժէ, եւ համեստից վայելուչ է գնոյն ունիցիք 'ի ձեզ, զորս լուեալ ժողովուրդք առ հասարակ հնազանդեալ խրատու բանից մեծաւոր հօր մերոյ, առնէին զոր ինչ վայելուչն էր բարեկրօն համեստութեան քրիստոնէից։

Ի 1821. ապրիլի 11. 'ի յԱնդրիանուպոլիս զքսան եւ հինգ գլխաւոր Յոյնս կալեալ 'ի բանտ արգելին, իբր նոքա եւս խորհրդակից եւ համախոհ ընդ ապստամբս՝ գաղտնի որոգայթս լարեալ են ընդդէմ տէրութեան, եւ կամեցեալ են խռովութիւնս ինչ յարուցանել անդ 'ի քաղաքին, եւ ոմն 'ի նոցանէ թագաւոր լինել, եւ այլ ոմն իշխան եւ իշխանապետ եւ ինքեանք տիրել քաղաքին, եւ սրով սուսերի մաշել զայլազգիս զամենայն, վասն որոյ վճռեցին զամենայն Յոյնն բանտարկեալ՝ մահուամբ կորուսանել։

Իսկ աքսորեալ Յոյն Պատրիարքն Կոստանդնուպոլսեցի Քիւռիլլոս անուն լուեալ զվճիռ մահուանն՝ գնացեալ առ միւսէլլիմն քաղաքին՝ եւ ասէ՝ թէ «սոքա արք վաճառականք են, եւ այսպիսի ապստամբութիւն չեն բնաւ իրազգած. ես եղէց սոցա ամենեցուն երաշխաւոր, թողեք զսոսա» ասելով աղաչէր միւսէլլիմին։

Իսկ միւսէլլիմն իբր ընկալեալ զաղաչանս նորա՝ եւ արձակեալ ասելով՝ գնա՛ գու նիստ 'ի տան քում եւ կառավարեա՛ զժողովուրդս քո, ուստի տուեալ 'ի ձեռս քանի մի զինուորաց իւրոց տանել մինչ 'ի յեկեղեցին հանգիստ, իսկ Պատրիարքն ոչ գիտելով ինչ երթայր ընդ զինուորաց, եւ իբրեւ եհաս 'ի դուռն եկեղեցւոյ, նետս զի դահիճն պատրաստեալ էր զկախաղանն վասն իւր, ապշեցաւ թէպէտ ընդ անակնունելի պատահարն, եւ գոչէր թէ չունիմ ես յանցանք ամենեւին, սակայն ոչ ոք անսաց բանից նորա, այլ արկեալ 'ի պարանոցն զխեզդ, կախեցին առաջի դրան մայր եկեղեցւոյն Յունաց Անդրիանուպոլսոյ, եւ յետ երեք աւուր տարեալ ընկեցին զմարմին նորա 'ի գետն։

Նոյնպէս եւ զգլխաւոր անձինս Յունաց ոգիս իբր քսան եւ հինգ, եւ զերիս քահանայս հանեալ 'ի բանտէն՝ զոմանս առաջի տան եւ կամ կրպակի կախեցին, եւ զոմանս գլխատեցին, եւ այնպէս զմարմինս նոցա թողեալ 'ի փոռոցի՝ մինչեւ շունք եւս յափշտակեալ զմասն 'ի մարմնոյ նոցին, եւ զինի երեք աւուրց տարեալ ընկեցին զմարմինս նոցա 'ի գետն։

Եւ այսպէս 'ի բազում տեղիս արարին. զգլխաւորս մահուամբ կարճեցին 'ի կենաց, եւ զսոսկականս ընդ ծանր խոշտանգանս արկին, մինչեւ իսպառ նուաճիլ նոցա, որպէս եւ եմք իսկ ականատես 'ի Կոստանդնուպոլիս. ոչ ոք աւագագոյն Յոյն թողին՝ այլ զամենեսին սպանին, կամ 'ի հեռաւոր տեղիս անպատնալի աքսորեցին, որով գրեթէ 'ի հիմանց ազգն Յունաց կործանեցաւ, դի ոչ մնաց ոք գիտնագոյն կարգաւոր կամ մետրապո-

լիտ, կամ իշխան•կամ վաճառական եւ կամ աւագագոյն այր. զամենայն սպառեցին, եւ ջնջեցին, եւ զմնացեալսն ընդ բռամբ նուաճեցին, եւ ընդ լծով ծանր տագնապացն ենթարկեցին։

Քանզի յոյժ երկնչէին այլազգիք յերեսաց գաղտնի դաւադրութեանն Յունաց, զի Մօռայ հանդերձ նախարարօքն եւ նահանգօքն ապստամբեալ էր ընդդէմ տէրութեանն, եւ անթիւ Յոյնս ժողովեալ անդ՝ հանապազ մարտ սաստիկ դնէին ընդ այլազգիսն, եւ կալեալ զբազումս անխնայ սպանանէին, եւ ո՛չ խղճէին, թէպէտ անդ քանի եպարքոսք բազմութեամբ զօրօք պատերազմէին, սակայն երկարէր վախճան մարտին, եւ ո՛չ կտրէին առնել ինչ ընդ Յոյնս, եւ էր երբեմն զի զոմանս Յոյնս 'ի նահանգէն Մօռայու կալեալ շղթայիւք իբր գերի բերէին 'ի Կոստանդնուպօլիս եւ հրապարակաւ կախէին կամ գլխատէին։

Սակայն այնու առաւել բորբոքէին զյարուցմունս պատերազմին, եւ ո՛չ կտրէին յաղթել ընդ բազում ժամանակս, վասն որոյ յերկուց կողմանց անհնարին հարուածս լինէր, եւ թէ Յոյն Մոռացի գտանէր 'ի Կոստանդնուպօլիս՝ 'ի հրապարակի կախէին, եւ զոմանս 'ի շղթայս պրկեալ 'ի մշտնջենաւոր ծառայութիւն նաւուց արքունի արկին, եւ զոմանս աքսորեցին 'ի մետաղս, եւ լուաք 'ի հաւատարիմ տեսողացն, թէ զբազմաց կապեալ զոտս եւ զձեռս 'ի գիշերի 'ի ծով ընկեցին՝ եւ խեղդեցին։

Իսկ եւ կղզիքն Սպիտակ ծովու՝ այսինքն Սամոս, Սուսամ Ատասի, Սէմէնտրէկ, Թաշոս, Այնոռոս, Պատրայ, Պաթինոս, եւ այլ բազում կղզիք, Կիրիտ, եւ Եօթնակղզիքն, եւ Ջամլճայ միանգամայն ապստամբեալ 'ի տէրութենէն, եւ ամենայնքն միաբանեալ ընդ միմեանս բազմութեամբ նաւուց հրոսակս եւ հէնս հանին 'ի Սպիտակ ծովս, եւ զորս միանգամայն գտանէին նաւս այլազգի դրօշակաւ 'ի վերայ ծովու, կալեալ զինչս յափշտակէին, զնաւաստիս եւ զճանապարհորդս սպանանէին, եւ գնաւն հրով այրէին, բայց Ֆռանկաց դրօշակաւ նաւուց ոչ մերձենային ամենեւին։

Թէպէտ 'ի կողմանէ տէրութեան բազում նաւս արքունի զօրօք եւ զօրապետօք գնացին 'ի կողմունս Սպիտակ ծովու, մարտիւ նուաճել զապստամբութիւն կղզեացն, սակայն ընդ բազում ժամանակս հողմն ընդդէմ լինելոյն ոչինչ կտրէին յաջողակ նաւել, եւ հասանել 'ի վերայ ապստամբացն եւ զդէմ ունել, վասն որոյ նաւք հրոսակաց յայտնի համարձակ շրջէին 'ի Սպիտակ ծովու, եւ զորս գտանէին՝ կողոպտէին, սպանանէին, եւ այրէին։

Որպէս եւ իսկ կոստանդնուպօլսեցի ուխտաւորքն Երուսաղէմի յայսմ ամի 1821. ելեալ 'ի Յոպպէյու դէպ ուղիղ նաւելն 'ի Կոստանդնուպօլիս, հանդիպեալ են 'ի Ռատոս զպակասութիւնս պիտեւանացն հոգայ, եւ անդ այլազգի մեծ գլխաւոր իշխանապետն կղզւոյն արգելեալ է զամենեսին, թէ ընդ ելանելն ձեր աստի ընդառաջ հէնք ծովու բազմութեամբ նաւուց շրջին. գուցէ պատահիցին եւ ձեզ եւ վնասեսցեն, ելէ՛ք 'ի նաւէն, եւ դնացէք ընդ ցամաք ճանապարհաւ 'ի Պօլիս, եւն.։

Որք ելեալ են 'ի Ռատոս եւ անդանօր բազում աւուրս դադարեալ, ապա կէսք ձիովք եւ ուղտուք խաղաղութեամբ եկին հասին 'ի Պօլիս, իսկ ոմանք եւս յուխտաւորաց կալեալ 'ի վարձու նաւ մի նէմցէ, եւ մտեալ 'ի նա նաւէին դէպ 'ի Պօլիս, եւ անցանելն ընդ Սամոս կղզեաւ՝ հէնք ծովու շրջապատեալ կալեալ զնաւն, եւ ասպատակեալ զուխտաւորաց զինչս եւ զապրանս բոլոր, եւ բազում ինչ եւս Սուրբ Յակովբայ վանուցն՝ մերկանդամ հանեալ են առ ափն ծովու Սամոս կղզւոյն, եւ 'ի վերայ աւաղոյն թողեալ անխնամ, եւ անվերարկու, ինքեանք հեռացեալ են անտի։

Իսկ նաւապետն նաւու գոլով աղդաւ Յոյն եւ դրօշակաւ Գերմանացի, խղճահարեալ ընդ քանի աղջկունս եւ քանի մատաղ մանկունս եւ ծերս, որք 'ի բացի այնպէս անյարկ 'ի վերայ աւազոյ մերկ եւ նքթեալ անկեալ էին 'ի մէջ Սամոս ատայու՝ առեալ կրկին 'ի նաւն՝ 'ի խնամել եւ 'ի սփոփել զնոսա, եւ սանի 'ի տեղիս իւրեանց, եւ զկնի քանի աւուրց բացեալ պատագաստն հեռացեալ է անտի։

Իսկ այնոքիք որք մնացին 'ի Սամոս 'ի վերայ աւագուն, բազում նեզութիւնս եւ տառապանս կրեալ 'ի սամոստացւոց, եւ 'ի բազում աւուրս անսուաղ եւ անճաշակ անցուցեալ, եւ ոչ ումպ մի ջուր յարրումն գտեալ անդ եւ յետ մնալոյ այլեւս աւուրս ինչ, գլխաւոր կղզւոյն Յոյն ազգաւ, բակլայի ալերօք հաց շինեալ պատառաչափս միայն օր ըստ օրէ բաշխէր նոցա 'ի յազուրդ, եւ ապա յետ տասն եւ ութ աւուր 'ի նաւակ եդեալ հանեալ է զնոսա հանդէպ կղզւոյն 'ի ցամաք ինչ, եւ ճանապարհ ցուցեալ նոցա երթալ 'ի տեղիս իւրեանց։

Որք ելեալ 'ի ցամաք մեծաւ տաժանմամբ ընդ քարաժայռ լերինս եւ ընդ մացառախիտ անտառս ճանապարհորդելով զբազում աւուրս, մինչեւ ոմանց տկարաց 'ի ճանապարհին մեռանիլ, եւ ոմանց 'ի ծերագունից 'ի լերինս մոլորիլ. եւ մնացեալքն ցան եւ ցիր սփռեալք եւ կիսամեռ նքողեալ հազիւ հասեալ 'ի Սէօքէ, եւ անդ բազում մարդասիրութիւնս տեսեալ 'ի սէօքեցւոց, եւ յուղարկեալ անտի 'ի Զմիւռնիա, եւ անտի 'ի Կոստանդնուպոլիս եկեալ ժամանեցին։

Սոյնպէս եւ Ռումէլիի Սուրբ Երուսաղէմի ուխտաւորաց նաւն, ընդ զալ վերադառնալն յԵրուսաղէմէ, կալեալ էին Թաշոսցիք, եւ կողոպտեալ էին դամենայն ինչս ուխտաւորաց, եւ բոկոտն հանեալ էին 'ի Թաշոս, եւ իբր 'ի բանտ արդելեալ։

Եւ յետ վեց ամիս պահելոյ զնոսա ամենայն խղճութեամբ եւ թշուառ կենօք, եղեալ զնոսա 'ի նաւ մի Անգղիացի հանեալ են 'ի ցամաք ինչ Ռումէլիին 'ի նաւահանգիստն Քրբք Ադաճին՝ որք անտի գնացին 'ի Հաւրենիս իւրեանց. ոմանք յէտիրնէ, ոմանք 'ի Ռուսճուխ, եւ ոմանք յայլուր. ընդ սոսա էր եւ Յովակիմ Վարդապետն Կոստանդնուպոլսեցի՝ յայնմ տարուջ նուիրակ Սուրբ Երուսաղէմի՝ Ռումէլիի վիճակին։

Իսկ հէնք ծովս օրէ յօր զօրացեալ զբոլոր Սպիտակ ծովն կալեալ ունէին. մինչեւ իսկ զբազում նաւս կողոպտեալ զինչս առնուին՝ եւ զնաւն այրէին, յորոց երկուքն եւ երեքն լի էր ընչիւք, որ գնայր 'ի Կոստանդնուպոլսոյ յԵգիպտոս՝ առ Մահմէտ Ալի փաշայն, վասն որոյ փակեցան. ոչ երբէք նաւ ինչ գնալ եւ դալ յահէ 'ի վերայ ծովու հինից՝ որք աստ եւ անդ բազմութեամբ նաւուց շրջէին եւ մերձենային 'ի կղզիս, կամ 'ի ծովափնեայ քաղաքս, զկերակուր եւ զցորեան բռնութեամբ յափշտակէին, եւ գնային։

Որպէս եւ 'ի գալն բազմութեամբ նաւուց 'ի ծովեղերեայ դիւղաքաղաքն Այվալրխ, առ 'ի դնել զկերակուր բռնութեամբ, զօրքն այլազգեաց՝ որք պահէին զքաղաքն յերեսաց հինից, կասկած առեալ թէ բնակիչ Յոյնք ընդ հէնս համախոհ են եւ միակամ. այժմ սոքա 'ի ներքուստ յարուցեալ 'ի վերայ, եւ նոքա յարտաքուստ կոտորելոց են զմեզ։

Վասն որոյ սուր առեալ 'ի ձեռին բնաջինջ ջարդեալ 'ի սուր սոյսերի մաշեցին գրոլոր Յոյնս, եւ զմատաղ մանկունս նոցա զաղջկունս եւ զերիտասարդս եւ զկանայս նոցա յափշտակեցին եւ գերեցին, եւ առ ոչինչ դինս գրազումս միանդամայն վաճառեցին, եւ զքաղաքն հուր եղեալ հրով այրեցին լաճիւն դարձուցեալ, եւ արարին աւերակ, որպէս զի ոտք թշնամեացն մի՛ կարասցեն կոխել 'ի նմա։

Արդ՝ թողցուք մեք այժմ զարտաքին վիշտս սասանութեանց, եւ սպանութիւնք թշուառապարար ողբերգութեանց կղզեաց բնակչաց՝ որք ընդ Յոյնս պաշարեալ ունէին, եւ քաղաքաց գիւզօրէից Միջերկրական ծովեղերեայ, բայ 'ի Մոռայէ՝ եւ վերոյիշեալ ոմանց կղզեաց, որք ընդ դէմ տէրութեանն հակադի՛ւնս 'ի մրցմունս պատերազմաց անխաղաղ յալեաց արեանց ծփանաց թաթաւեալ՝ մարտնչէին անհաշտ խռովութեամբ։

Եւ եկեսցուք ասա 'ի ներքս 'ի թագաւորանիստ քաղաքս Կոստանդնուպոլիս, եւ պատմեսցո՛ւք թէ զի՞նչ եւ որպիսի՞ անցից վշտաց հագորդեցան անձինք մեր, որոյ էաք ժամանակակից եւ ականատես ամենայնի։

Արդ՝ ըստ որում ըստ հրամանի տէրութեան առ հասարակ ամենայն այլազգիք 'ի զէնս 'ի սուրս եւ 'ի պատրաստութիւնս կային զինուորեալք,

բազումք 'ի նոցանէ՝ որք 'ի կարգէ սրիկայից՝ իբր գազան բազմագլխի զթոյնս իւրեանց ընդ մէջս ածեալ՝ եւ հրով մահահոտ զինու ամրակուռ զանձինս պնդեալ, ելին այնուհետեւ ցրուեցան տարածեցան սփռեցան ընդ փողոցս եւ ընդ հրապարակս եւ յանցս ամենայն ճանապարհաց, եւ սկսան գանցաւոր քրիստոնեայս մերկացուցանել թափել 'ի դրամոց՝ կեղեքել վիրաւորել եւ մահացուցանել, թէ 'ի հրապարակի թէ 'ի մեկուսի տեղիս, թէ 'ի բազմամբոխ վաճառանոցս՝ եւ թէ յանմարդի վայրս, իւրաքանչիւրքն ընկերեալք 'ի մեծ թշնամութիւն առ Յոյնս եւ առ Հայս[11], իսկ Հրէից ո՞չինչ, զի նոքա զանձինս թլփատեալս պարծելով՝ մերձ 'ի կրօնս այլազգեաց զինքեանս վարկեալ. լինէր վնաս եւ ոչ միում ումեք 'ի նոցանէ։

Եւ այսպէս տասն մի՝ հինգ մի՝ եւ աւելի եւս կամ պակաս շրջէին յամենայն տեղիս, եւ առաջի կրպակաց քրիստոնէից կացեալ ղշալ զղումաշ եւ ըստ պահանջման արհեստի իւրաքանչիւրոցն՝ զինչս զծախ եւ զվաճառ յափշտակէին, խլէին, եւ յայտնի անիրաւէին, եւ թէ ոք ընդ դէմ դառնայր կամաց նոցա 'ի չթողուլ՝ յարգելուլ, եւ կամ 'ի պահանջել զգին ընչիցն, առ վայրկենին յերից կամ չորից կուսէ պատառուածս մարմնոց նոցա հատու սրով անխնայ բացեալ քաղէին գոգիս նոցա՝ ընդ շաւիղ հոսման արեան նոցա, եւ օր 'ի վերայ աւուր սաստկանային այս օճիրք անիրաւութեանն առ քրիստոնեայս։

Ապա յայսմ տարապարտ մահուն յերկիւղէ, եւ 'ի տարաժամ սպանման սասանութենէ երկուցեալք ամենայնքն 'ի տունս իւրեանց թաքուցեալ ղօղեալ սրտաբեկ առ ահին դողային 'ի տագնապս անհնարին, մինչեւ չիշխել ումեք ընդ դրունս առ արտաքս վասն պիտանեաց ելանել։

Եւ որ աղէտալին է՝ ասասցո՛ւք զայն. այս սրիկայք յորժամ դիպէին ոմանց աղքատիկ էսնաֆից, որք զապրուստ հացի իւրեանց կենաց չէին բաւական հոգալ գտանել, եւ ողորմութեան էին կարօտք, զսոսա իբր խրղճահար սնոտի թելադրութեամբ մխիթարէին թէ՝ զի՞նչ տանջիս յայդմ խրղճուկ կեցութեան. յա՛ւ է քեզ մեռանիլ քան կարօտութեամբ կեալ, եւ ընդ ասելն առժամայն 'ի սուր անցուցանէին։

Այլ այս բանք նոցա չէր այլ ինչ, եթէ ո՛չ զի ունայն գտին զնոսա 'ի որամոց, քանզի այս էր բունեալ ատելութիւն մաղձեալ դառնութեան սրտիր նոցա, զի զո՛րս եւ տեսանէին եւ որում մերձենային, թալանէին, կողոպտէին, եւ յաւել եւս սպանանէին, եւ հազիւ ոք կտրէր զերծանիլ 'ի ձեռաց նոցա, իսկ պրծեալք 'ի կողոպտելոյ՝ բնաւ ո՛չ։

Եւ յառաւելն արծարծիլ հրդեհիս այսորիկ՝ եղեւ, զի գունդ կազմեցին սոքա յաւուրս ծոմապահութեան իւրեանց թուով աւելի քան զհազար անձինս, եւ հասեալք 'ի Պէկ օղլու՝ աջակիզ եւ օգնական զնաւամարտիկ զօրս 'ի թիկունս ունելով՝ ընդ ամենայն ճանապարհս հրացանս հրդեհեալ՝ բազում տանց եւ ապարանիս զպատուհանսն եւ զշրջանակս ընդ ասլակիս բեկանէին եւ խորտակէին 'ի մերուստ վայրահոսեալ, մինչեւ 'ի Լատինաց անգամ առ դիպիլն նոցա՝ սպանանել զնոսա, եւ լու 'ի լու լինել ամենայն պահակաց եւ զինուորապետաց, փութանակի առ այս խումբ ապստամբաց հասանէին, ընդ որս եւ պետն նաւատորմիղ հանդիսադրի խափիտան

---

11 Տե՛ս Պերպերյանի մոտ. «Տեսեալ դայսոսիկ Եէնիչէրի կոչեցեալ սրիկայից սկսան նոքա առանց հրամանի արքայի գանել եւ կոփահարել դՀայս եւ դՅոյնս, եւ նախ առաջին զՊապա օղլու պարոն Հայրապետն յոշոտեցին անդամ անդամ 'ի Տիվան Եօլուն, եւ յետ աւուրց ինչ եւ դայլ եւս Հայազդիս սկսան սրամահ խողխողել 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի գիւղօրէսն, եւ եղեւ քաղաքն իրրեւ դծով ալեկոծեալ, եւ ամենայն քրիստոնեայ 'ի վտանգ մահու հասեալ զԱստուած կարդային յօղնականութիւն», «...եւ 'ի 29 ապրիլի կախեցաւ եւ Զարաղետն Գասպար ամիրայ 'ի դրանէ Վալիտէ խանին 'ի պատճառս լինելոյ հատավաճառ Տէփէտէլլնի Ալի փաշային, որ ապստամբեալն էր յայնժամ 'ի տէրութենէն» (էջ 174, 175)։

բաշայն բաղում զօրօք ժամանէր եւ ակնածութեամբ եւ խնամով իմն յորդորէր զնոսա 'ի բաց կալ յայնպիսի ապստամբ գործոց, եւ մի՛ ըստ կամս հաճութեան սրտից դնտցեալ 'ի հնազանդութենէ կամաց արքային օգտիլ՝ եւ արտաքս ելանել, քանզի ո՛չ կամէր մեծազօր եւ գթած տէրութիւնն զանհեգնութ գործս նոցա, եւ չէր իսկ հաճեալ գնացից նոցա։

Իսկ իսպառ նուաճել զնոսա անհնարին էր յայն ժամ, մանաւանդ ժամանակն վտանգաւոր յոյժ յոյժ, եւ ամենայնքն 'ի նշմարս հրամանի տէրութեանն նշմարէին, դի կոտորեսցին առ հասարակ զքրիստոնեայս, եւ 'ի սուր սուսերի մաշել, եւ այսմ ակնկալէին հանապազ յաւարի առնուլ զտունս եւ զինչս, զկին, զկոյս եւ զմատաղ մանկունս, թէ յայտնի բանիւ եւ թէ ծածուկ խորհրդով. եւ զայսոսիկ՝ որք խորհէին եւ խօսէին՝ էին արք կորովիք հաստարազուկք յաղթանդամք բեռնակիրք անգութք եւ ամբարհաւաճի. եւ զի՛նչ եւս թուեցից ըստ ամենայնի հանդիտացեալք այնմ՝ որ 'ի մերձ կատարածին ծնանելոցն է, որք եւ ոչ անգամ իւրեանց օրինաց եւ գրոց ունկն դնէին, եւ ոչ զիւրոց օրինաց բերէին զվարս յանձին։

Եւ դուշի՛ր փողոցք քաղաքիս անշշունչք 'ի մարդկանէ իբր ամայի եւ անմարդի վայրաց լերանց ցուցանէին տեսիլ, եւ ռումբք հրացանից 'ի տիւ եւ 'ի զիշեր անդադար իբր զմարախ թափէին 'ի հրապարակս եւ 'ի տանիս, որում անզգուշութեամբ պատահելքն՝ զոդիս փչէին ընդ մուտս ներից, եւ ո՞ւր որ ըստ արժանւոյն իցէր բաւական զմեռնալս իւր բառնալ եւ թաղել եւ լալ։

Եւ թէպէտ պահնակ զինուորք զհետ լինէին ըմբռնել զսպանիչսն, այլ այն առ երեսս՝ դի մի՛ մեծամեծ չարիք յառաջ եկեսցեն, քանզի որպէս ասացաք՝ սակաւիկ մի եւս եւ առաւել վիշտք յերկանց նոցին զայրաղին դառնութեանցն առ ծնունդ դային, զի իբրեւ զհուր բորբոքեալ մերձ էին զաշխարհս կիզուլ, տոիթ առաջի առնելով զապստամբութիւնն Յունաց, թէ նոքա զլուխ վերացուցեալ զմեզ եւ զթագաւորութիւնս մեր ջնջել ջանացան, իսկ մեր արթուն դտեալ, ապա արժան է մեզ զքրիստոնեայս ջնջել ջարդել եւ 'ի սուր մաշել սուսերի։

Եւ ապա որ ինչ հաճութեան կամք նոցին ցանկայր՝ լնուին, եւ 'ի գործելոյ ոչ դադարէին, մինչ զի՝ 'ի տեսանելն նոցա զդրունս ուրուք տան բացեալ ըստ դիպման կամ ըստ իմեք հարկին՝ մտեալ 'ի ներքս բռնադատել անգամ զկանայս համարձակեցան, յորմէ փորձութեանց առ երկիւղին սիրտք նոցա ըստ տկար բնութեան նոցա առ ժամայն պատառեալ՝ յետ աւուրց ոչ բազմաց 'ի թակաղ թաւալեալ 'ի գերեզման դնէին, եւ ոմանք յանկոդին ծառոյեսոյ հիւծէին եւ մաշէին յախտս ցաւոց։

Եւ այս աղէտք զբազումս զարհուրեցուցեալ մտածէաք այնուհետեւ դվախճանն մեր, թէ յորո՞ւմ կայանալ ունիցի, քանզի բարձան 'ի սրտէ սրիկայից ահ եւ երկիւղ, եւ դարձան յանհնազանդութիւն եւ յանսաստութիւն. ո՞ւր երկիւղ, ո՞ւր լսողութիւն, ո՞ւր գութք, եւ ո՞ւր ողորմութիւնք առ բայէս. վերացաւ հատաւ լքաւ, եւ ընդ հակառակն ցուցաւ, զի Տէր բարկացեալ 'ի վերայ մեր վասն մեղաց՝ այս ամենայն չարիք կուտեցան կացին 'ի գլուխս մեր, վասն որոյ թախծագին հեծեծանօք լայաք, եւ ողբս 'ի բերան առեալ 'ի տիւ եւ 'ի զիշեր անդադար հսկմամբ առ ողորմած անուշակ անմահ երկնաւոր Աստուածն մեր պաղատէաք. փրկել զմեզ յարժանահաս նեղչաց մերոյ՝ եւ մի՛ կորուսանել, եւ թողուլ զպարտիս մեր՝ այց արարեալ համայն քրիստոնէից, ընդ որս եւ խղճալի աղքատ եւ ցաւած ազգիս։

Զի սիրտ ամենեցուն եւ մեր յանբերելիս մնայր վիշտ, եւ կայաք մահու ըմբռնեալ, եւ կեանք մեր միայն 'ի բերան ողորմած տիեզերախնամ արքային կային կախեալ, որ եթէ ըստ սրտի ապստամբացն բերիւր, իբրեւ զումպ մի ջուր կենդանւոյն զմեզ կլանէին միանգամայն, եւ վիզէին յաստի կենաց զկենդանութիւնս մեր։

Այս ամենայն 'ի ցամաքակողմունս առ բնակութեամբ շենից եւ գիւղից ծովեզերաց եւ ցամաքակողմանց 'ի նոցանէն գործիւր, իսկ 'ի վերայ

ծովու յորժամ տեսանէին զոք ընդ նաւակս թիավարել 'ի գործ ինչ՝ իբր ցկայծակունս հրոյ 'ի վերայ դիմեալ՝ կողոպտէին զինչս նորա, զորս աղաչէր՝ որոց եւ լալով շնորհէր խղճալին մերկացեալ՝ միայն թէ անձին խնայեսցեն, եւ ահա զերծումն նոցա եւս մազապուրծ այս օրինակ։

Ապա ո՞վ էր՝ որ այնուհետեւ յանձին յուսացեալ ընդ ծովու տացեր զճանապարհ իւր. նա զի եւ անսպառ արճիճք եռացեալք 'ի հրացանից իբրեւ զկարկուտ՝ կամ իբր զձկնկուլս թռչէին թափելով 'ի վերայ ծովու, ապա ո՞ր սրտապինդ՝ զոյժ 'ի կուրծս ամրացուցեալ՝ համարձակէր շրջիլ ընդ ծովու եւ կամ գնալ 'ի գործս։

Արդ՝ այս դառն աղջամուղջք մթութեան, եւ վշտատար անտանելի մէջք թաղծութեան պարածածկեալ զմեօք, եւ հրաման մեծազօր տէրութեանն առ մզկիթս իւրեանց հետզհետէ 'ի սաստկանալն՝ եւս առաւել զմեզ ահաբեկէր. զի տայր գրել եւ ծանուցանէր ամենեցուն իւրայնոց՝ թէ ամենայն ոք զզէնս իւր զգուշութեամբ 'ի պատրաստի պաշտպանեսցէ, եւ զվառօգակալս միշտ առ ըերան լցեալ ունիցի, զսուրս սրեալ, օդք յոտս, սոնապան 'ի սրունս, եւ որ ինչ զգեստ է պատշաճական պատերազմաց զգենուլ փութասցին, եւ 'ի գիշերի եւս մի՛ 'ի խորս ննջման պարապիցին, այլ թեթեւ քնով արթուն մնասցեն, եւ 'ի նիրհումն մի՛ թուլասցին։

Յորմէ առ արտաքս այսպէս կարծիւր 'ի մէնջ, թէ գուցէ յերկիւղէ բնակչաց բնիկ Յունաց լինէր այս հրաման, եւ ոմանց թէ՝ Իուսիա տէրութիւնն ունի ընդ Սեաւ ծովու դիմել 'ի վերայ քաղաքիս նաւու հանդերձ. այլ այս ամենայն բանք 'ի դերեւ ելանէին, եւ միտք տէրութեանն 'ի թագուն մնայր, եւ ոչ ոք իշխէր հարցանել կամ խօսիլ ընդ ումեք վասն իրացս եղելոց, քանզի սաստիկ հրաման ել 'ի տէրութենէ բնաւ ումեք չխօսիլ ղդարձուածոցն՝ զորս տեսանէաք, եւ ծպտեալ կերպարանօք լրտեսք բազումք 'ի բազում տեղիս սփռեալ 'ի լեզուս խօսելով՝ որոնէին զվիպիչս գործոց տէրութեանն, եւ 'ի գտանելն բանիւ տէրութեան տարաժամ մահացուցանէին, որպէս յաղագս այսր իրի զերեւելի երկուց գլխաւոր այլազգեաց բարձին զգլուխս՝ եւ հատին զկեանս նոցա, յորմէ ահիւ սասանեալ ամենայն ոք՝ զլեզու իւր կապէր 'ի բերանս իւր, եւ դուռն ամուր դնէր իւրոց շրթանց։

Ընդ այսու ժամանակաւ եղեւ՝ զի զիւրաքանչիւր անձինս յանուանէ գրեցին ազգին Յունաց, եւ իւրաքանչիւրոցն երաշխաւորս կացուցին մի մի, զի մի՛ կարասցէ փախչիլ թէ նաւու եւ թէ ցամաքաւ, եւ արտաքս առ այլ տէրութիւն գնալ, եւ զանուանս նոցա արձանացուցին յստուար մատեանս՝ որ մինչ ցարդ պահի առ նոսա, քանզի զբազումս 'ի Յունաց կալան 'ի ճանապարհաց փախստէից, որք դիմէին յերկիր եւ 'ի տէրութիւն օտար, եւ տուգանօք եւ բանտիւք եւ գանիւք եւ մահուամբ խոշտանգեցին։

Իսկ յոլովք այնք էին յերեւելեացն Յունաց՝ որք գնացին ելին 'ի քաղաքէս զանխուլ փախստեամբ, զորոց զտունս դատարկացեալ միայն 'ի բնակչաց՝ զտանել մարթացան, որք եղենն հոցա հետամուտք, առ որս ցասուցեալ յոյժ տէրութիւնն հրաման հանէր առ Յոյնս եւ առ Հայս չելանել ումեք 'ի քաղաքէս, եւ որոց որք ելանենն՝ կոտտամահ սպառնալիս խոստանայր եւ դառնաշարշար մահս։

Որպէս եւ յաղագս այսր հրամանի՝ յատկապէս ըէիզ էֆէնտի յարգութիւնն, յիւր եալըն զՍրբազանն Պօղոս Պատրիարք Արհիեպիսկոպոսն Կոստանդնուպօլսոյս կոչեաց առ ընթեր իւր, եւ խօսեցաւ ընդ նմա բերան առ բերան պատուէր տուեալ՝ թէսքէրէիւդ (ասէ) ծանուցես քեզ հպատակելոց չտալ ումեք զոտս իւր յերկրէս հեռանալ եւ կամ փախչիլ, որ վաղվաղակի եկեալ եւ բանիւ գրութեանն հրատարակէր ծանուցմամբ իւրում ազգին։

Իսկ մեք այսուհետեւ յայս աղէտս լցեալ՝ ծփէաք յալիս խռովութեան, իբր նաւ դիւրակործան, եւ ընդ կոհակս լեռնացեալ յուզմանց տարաբէրէաք մերձ 'ի սուզանիլ, եւ 'ի լինիլ իրացս այսպէս, երկիւղ զսիրտ ամենեցուն պաշարեալ ոչ միայն ռայէից՝ այլեւ բարեբարոյ (ըոզէհլի կոչեցեալ) բնաւին այլազգեաց, որք ընդ տունս 'ի սենեկի զօղեալ ամրացեալ փակեցան ապա

ամենայն վաճառք, եւ տուր եւ առութիւնք կասեցան, եւ շուկայն շատանայր պաղատանութեամբ մարաց ոմանց եւ եթ, եւ այսմ դժկամակ գտեալ տէրութիւնն ոտ ամենայն արհեստագործս պատուէր եւ հրաման առաքէր բանալ իւրաքանչիւր ոք զկրպակս իւր, եւ տուր եւ առք 'ի մէջ ածել։

Իսկ ոտամբակք ոչ Թոյլ տալին խաղաղանալ երկրին, եւ անլսելի եղեալ հրամանի արքային լեռ ասուրց ինչ խաղաղանալոյ իբր շունչ առեալ՝ դարձեալ վերստին 'ի յառաջին ցոփութիւնս չարութեան իւրեանց դիմէին խաղալ, վասն որոյ բազում անգամ 'ի դրունս եպարքոսի զումարէին ամենայն մեծամեծք եւ խորհրդական անձինք յարգականք տէրութեանն, եւ վարպետք սահմանի. հանդարտեցուցանել զնոսա 'ի խռովածու գործոց՝ եւ յանպարտ ապստամբութենէն, եւ 'ի բռնալիր կեղեքմանց, եւ 'ի զմարդ մերկացուցանելոյ անիրաւաբար, եւ այս 'ի շարաթի յերկուս կամ յերիս նուագս, իսկ բանն ոչ եկանէր արաւաքս՝ քանզի երդմամբ հաստատեալ էին՝ չտալ զխորհուրդս ոգոի ոտարի երբէք, եւ կամ դրաոս անգամ իւրոց բանիցն ծածկեցելոյ յայանել։

Եւ բան որում յայսմ շփոթութեանց գահի հարեալ եւ թողեալ զնացեալ էր Ռուսական տէրութեան դեսպանն[12], եւ փոխանորդ Անգղիացւոց դեսպանին յանձն արարեալ 'ի դէպ պահու զպետեւանս գործոյն հոգալ, վասն որոյ բազումք բազմադիմի բանս 'ի քմաց հմայէին. իւրաքանչիւր ոք ըստ սրտին ցանկութեան 'ի ծածուկ խորհելով եւ խօսելով՝ ոմանք թէ նշան պատերազմի է զնալն նորա, այլք թէ՝ յաղագս հաշտեցուցանելոյ եւ կամ հանդարտեցուցանելոյ զապստամբ Յոյնս միջնորդ լինիլ տէրութեանն իւրում, կէսք թէ մատն նոցա մխեաց յոտն արձակիլ Յունաց 'ի մարտ խռովութեան եւ ապստամբութեան, շատք թէ՝ բան կազմեալ են քրիստոնեայ թագաւորք միահաղոյն ելանել 'ի մարտ, եւ յոլովք յոլով ինչ։

Իսկ այս բանք անհիմն եւ անհաւատալի, մանաւանդ թէ ամենայնքն ընդ միտս ըստ հաճութեան հնարէին գիտս, իսկ ո՞րն լինիլ ճշմարտութիւն՝ անհրեւոյթ, եւ չեղեւ հնար դիտել։

Եւ մինչ վշաացեալ մեր յայսպիսիս ծփէաք, վիշտ երկիւղին ճմլէր զսիրտս մեր, եւ յանհնարին տագնապս մաշէաք, ահա Աստուածային իմն խնամօք՝ ըստ որում սիրտք թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ, լուր իմն փաշալից հնչիւր 'ի լսելիս, եւ թէպէտ յառաջագոյն եւս լսէաք, սակայն բազմավէզ ստութիւնք անհաւատալիս առնէին զմեզ, մանաւանդ թէ ո՛չ առանց շփոթութեան վճարէր այնպիսի գործ, զի ոչ կամէին սրիկայք տեղւոյս։

Սակայն հրաման թագաւորին սաստկացեալ հնարիւք քաջ մտավարժութեան իւրոյ, եւ իւրոց խորհրդական իմաստնոց, յանկարծ երեր եւ անցոյց զՖաղիլէթիւ գիպրահիմ փաշայն 'ի Պրուսայու նահանգաց բազում քաջապինդ զօրօք 'ի կողմն Ռումէլւոյ, եւ նստոյց 'ի Պէօյիւք Տէրէ, 'ի նեղուց Սեաւ ծովու 'ի պաշտպանութիւն բերդորէից պատնշաց՝ 'ի խէթ ապստամբաց, եւ յերկնցուցումն յանգգնելոց, յորմէ խաղաղացան վայրք 'ի Պէկ Օղլուէ մինչեւ 'ի Ռումելի Պողազի Ֆէնէրն, հանդերձ ծովեզերեայ գիւղօք եւ շինուք, եւ չէր ոք յայնմհետէ որ համարձակէր զործել ինչ անիրաւ յայնոսիկ տեղիս։

Եւ ինքն Իպրահիմ փաշայն խօլ անուամբ 'ի շաբաթն յերկուս կամ յերիս նուագս՝ չորս հազար քաջի արամբք ձիաւորօք շրջէր եւ զննէր զեղելու-

---

12 1821 թ. հուլիսի 6(18)-ին ռուսական դեսպան Ստրոգանովը սուլթանական կառավարությանը վերջնագիր հանձնեց, որի մեջ պահանջում էր վերջ տալ քրիստոնյաների չարդերին, վերականգնել նեղուցներում նավարկության ազատությունը և թուրքական զորքերը դուրս բերել Դանուբյան իշխանություններից։ Պատասխան չստանալով, 1821 թ. հուլիսի 29-ին (օգոստոսի 10-ին) Ստրոգանովը հայտարարեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին և դեսպանատան ամբողջ անձնակազմի հետ դուրս եկավ Կ. Պոլսից (Տե՛ս՝ Г. Л. Арш. Этеристское движение в России. М., 1970, с. 329--330):

թեանց՝ եւ հմտանայր ամենեցուն, եւ պահնակս յիւրոց զինուորեալ զօրաց կացուցանէր յանկիւնս փողոցաց, որք լռիկ նստեալ սանձ իբր 'ի բերան ամբարշտացն լինէին։

Եւ յետ ոչ բազում ինչ աւուրց զԱպտուլլահ փաշայն՝ որ նախ պօստանճի պաշի, ապա իմրախօր, ապա խափտան փաշայ, հուսկ ուրեմն յԻսկիւտար նստուցին եւ զնա 'ի փաշայութեան, լինիլ եւ նու Անատօլու նահանգաց խաղաղիչ՝ որ 'ի տեղւոյն մինչեւ 'ի վեր անդր 'ի Պէկ Խոզ, կամ անդր եւս տիրելով՝ եւ ածէր զանհլու ապարասանսն 'ի հնազանդութիւն, եւ բաղում բարութիւն ցուցեալ կողմանցն այնոցիկ՝ զարժանի յիշատակաց գործս ցուցանէր, եւ զկամս անձնապաստան բռնացելոց 'ի նուաճութիւն ածէր։

Իսկ այս ամենայն խորհրդով եւ կամօք իմաստուն կառավարչի զթած արքային մերոյ, եւ խաղաղացան՝ յանդորրու զետեղեցան, եւ 'ի հանգստութիւն մուծան ամենայն բնակիչք եւ բնակարանք արտաքին վայրաց։

Իսկ աստ 'ի ներքս ընդ պարիսպս եղեալքն դեռ 'ի բոց նեղութեան այրէին աղէտիւ, քանզի լցան աստ յարտաքուստ ամենայն սրիկայք՝ եւ ըստ հաճութեան կամաց առնէին՝ որ ինչ ձեռք նոցա հնարէր, եւ ո՞վ էր որ լսէր բանից եւ հրամանաց թագաւորին իւրեանց։

Քանզի 'ի միում ժողովի՝ որ վասն այսր անիրաւ գործոց ժողովապետ կամ պատասխանարար նախիպ ըլ էշրէֆն դիպեալ՝ զպատուէր արքային ամենեցուն ժողովոյն յետ ծանուցանելոյ նոցա՝ ասէ.

«Ո՜ ապստամբք, զի՞նչ գործ է այս, զորս դուք գործէք». եւ առեալ զպատգամս 'ի գրոց հաւատոյ իւրեանց՝ առաջարկէր նոցա թէ՝ «որք 'ի դրպանս իւրեանց զթուղթ հարկի մերս թագաւորին ունին եւ դայնպիսիս ո՜ ոք եւ իցէ 'ի սպանանելն՝ մահու դատապարտեալ է, զի այս է (ասէ) գիր օրինաց հրամանի մերոց մատենից, եւ դուք (ասէ) զանպարտս եւ զանմեղս կողոպտէք, մերկացուցանէ՛ք եւ վէրս 'ի վերայ վիրաց եղեալ սպանանէ՛ք, ո՞ր օրէն, ո՞ր պատուիրան եւ ո՞ր իրաւունք տան ձեզ դատել՝ կամ գործել զայսպիսիս, ցուցէ՛ք (ասէ) ինձ, զի իմ շրջեալ է ընդ բանս գրոց մերոց, եւ չի՛ք տեսեալ այդպիսի հրաման բանի, կամ որք զայսպիսիսն գործեն, առանց դատաստանի կամ պատժոյ մնալ» եւն.։

Նաեւ յայս միտ եւ բազում բանս խրատու եւ արգելական յանդիմանութեան գրէր եւ մեծազօր տէրութիւնն հետզհետէ, եւ տայր ընթնոնուլ յամենայն մզկիթս եւ 'ի ժողովս նոցա, թէ ոք անիրաւի 'ի ռայէս իմ, թէ կողոպտելով թէ հարկանելով, թէ մերկացուցանելով եւ թէ սպանանելով՝ ի՛նձ անիրաւի, զի կեանք նոցա (ասէր) ընդ կեանս իմ է, եւ ինչք նոցա ընդ ինչս, եւ վտանգ անուան ընդ անուն իմ։

Ահա մինչ ցայս խնամք պաշտպանութեան զթած արքային հոգայր զմեզ, այլ ո՞ւր այն ունկնդրութիւն բարեաց, չարիք զեղան՝ բարիք բարձան, աղէտք լցան, հանգիստք տեղի ետուն տխրութեանց, որով տառապէաք, այլ այս կեցցէ այժմ աստ։

Դարձուք մեք այժմ 'ի նաւս պատրաստեալս, որք 'ի Պօլսոյս հանդերձ Տէվրիշ խաբտանա կոչեցելովն, որ էր յայս նուագ զօրապետ նաւական զօրուն, որք ելեալ գնացին 'ի կողմանս Պոխճա ատայի, որոց վերայ յանկարծուստ հասին նաւք Յունաց հինից, եւ աւուրս երկուս 'ի տիւ եւ 'ի գիշեր պատերազմեալ զեօթն նաւս ընկղմեցին 'ի Յունաց, որոց նաւքն հասանէին 'ի թիւ երեքհարիւրոց, իսկ սոցա հնգետասան կամ աւելի եւ կամ պակաս, թէ եւ մեծամեծք եւ ահագին, եւ 'ի սաստկանալ պատերազմին Յոյնք հրդեհ ետուն՝ եւ խորտակեցին զնաւ մի արքունի տէրութեանն, եւ պաշարեալ շուրջ զնաւու խաբիտանին՝ եւ զնորին եւս վառեցին 'ի հուր, եւ մինչ բորբոքիւր կայմք եւ առագաստք եւ խելք նաւու՝ տեսեալ զանյաջող ելսն խաբիտանին՝ չոքաւ զիւրովի, պատառեալ զորովայն իւր՝ եւ արտաքս տուեալ զաղիս եւ զփորոտիս, ա՜րկ զինքն 'ի խեղդ ծովու, եւ զօրքն որք իբր ութն հարիւր լեալք, անցին ընդ ջուր լողացեալ, եւ պրծեալքն մազապուրծք հա-

դիւ թուով երեք հարիւր, իսկ մնացեալ հնգից հարիւրոց գերեզմանք՝ ընկանց լինէին որովայնք եւ հողամաղից։

Այս ձայն դուժի հասեալ 'ի քաղաքս՝ յաւե՛լ 'ի սրտմտութիւն զտէրութիւնն, եւ ըստ որում եղանակն աշուն, աճապարեալ աստ օճախք եւ զինուորապետք ղրաղում թօփճիս եւ զօրս, եւ զահագին հրալից նաւակս պատերազմի, եւ զմեծամեծ արքունի նաւս իբր հնգետասան՝ հանին 'ի վերայ հինից Յունաց՝ 'ի վրէժխնդրութիւն գործոց նոցա, եւ եդին զօրապետ նաւուց զխատա Ալի կոչեցեալն՝ այր արեան ծարաւի՝ սիրող զկոտորած անմեղ դիւղականաց՝ եւ յանդուգն՝ եւ անխնայ 'ի հարուածս։

Որ ընդ ելանելն աստի՝ 'ի վրէժխնդրութիւն բարկութեան զսիրտ իւր բորբոքեալ, միանգամայն փութայր վառել հրդեհել զամենայն ծովեզերեայ դիւղօրէս եւ զկղզիս ծովու՝ որոց բնակիչք Յոյնք, եւ ելեալ շրջեալ ընդ արտաքս փոքր հեռաւորութեամբ քան զբերդս Զանախ Խալէի՝ (եւ որպէս ոմանք ասացին թէ 'ի նահանգաց մերձաւոր դիւղօրէիցն իցէ) որք շրջեալ ընդ կողմունսն, կալեալ զփոքր եւ զմեծ նաւս 'ի Յունաց ամայի անտէրունչ գտեալ, որք եւ ոչ սլիտանի իրի իմեք, իբր թուով տասն կամ աւելի, եւ զերեսուն զարս 'ի բնակչաց դիւղօրէիցն ըմբռնեալ՝ որք երկրագործք եւն., եւն.։

Եւ վասն ձմեռան 'ի վերայ հասանելոյն՝ վերադարձաւ նոյն Խառայ Ալին վերոյ գրեալ աւարօքն, եւ 'ի հասանիլն 'ի Պոլիս մեծ հանդէս քաջութեան գործեալ ցուցանէր, քանզի յորժամ ժամանեցին նաւքն ընդ առաջ Լօթնեակ կլայից՝ զոյգ առ զոյգ զարսն ըմբռնեալս ընդ առասանս նաւուց 'ի բտբձրութենէ կայմիցն կախեաց զերեսունսն հանդէպ իրերաց իբրեւ գծագկարուրդն 'ի տես եւ 'ի վրէժ քինու բնակչաց քաղաքիս, եւ զաւուրս երկուս թողեալ 'ի կախ՝ ապա արկին զդիակունս 'ի ծով։

Եւ ըստ որում ձմեռն, կացին մնացին աստ նաւքն, անցուցանել զձմեռնային աւուրց զցրտութիւնն, եւ 'ի նորոգիլն եղանակին գարնայնոյ 'ի մուտն թուականիս 1822. եւ 'ի ծաղկիլ մատաղ տերեւոց եւ ոստոց ընդ դաշտս եւ ընդ լերինս 'ի զարդարութիւն, յայն ժամ ապա ելեալ 'ի քաղաքէս չուէցին նուռք նախնեօք եւ այլ եւս օգնիչ զինաւորեալ եւ հրազինեալ նաւակօք եւ հասեալ 'ի Զանախ Խալէ՝ անդ մերձակայս շրջէին։

Իսկ 'ի միւս կուսէ հէնք ծովուցն ապստամբից Յունաց եկեալ հասեալ պաշարեալ զՍախրզ կոչեցեալ գեղապսակ քաղաքն շքեղ, զբնակիչ Յոյնս՝ որ անդ, ստիպէին միաբանիլ յապստամբութիւնս իւրեանց, մինչեւ զոմանս 'ի մահ մատնել՝ թէ լերո՛ւք ընդ մեզ, եւ եթէ չկամիք զբնաւսդ կոտորեմք, որոց ոչ կարացեալ զդէմ ունիլ եւ խոյս տալ 'ի բանիցն, կամայ ակամայ բռնադատեալ ետուն խօսք, թէ ընդ ձեզ եմք՝ որ ինչ կամք ձեր ճահ դատեսցին (բայց այս առ երեսս ինչ ստորասութիւն), եւ մինչ այս այսպէս լինէր՝ բնակիչ այլազգիքն որ անդ, եւ զինուորք 'ի տէրութենէն եդեալք՝ յերկիւղէ եկելոցն՝ եւ 'ի մահուանէ փախուցեալք, 'ի բերդն մտեալ՝ ծածուկ մարդ հանին եւ ծանուցին զպաշարմանէ Յունացն՝ նաւատորմիղ հանդիսին իւրեանց՝ եթէ ո՛չ վաղվաղէք ժամանել մեզ յօգնութիւն, զմեզ բնաջինջ կորուսանեն ապստամբքն, քանզի ահա առ դուրս զմեօք պաշարեալ, եւ զբնակիչ Յոյնս մեր ապստամբեցուցին ընդ ինքեանս՝ եւ յարուցեալ են 'ի վերայ մեր, եւ մերձ է կորուստ մեր։

Ուստի 'ի լսել զայս խափիտան փաշայի՝ որ ընդ նաւահանդիսին էր՝ աճապարեալ եւ վաղվաղեալ հասանէ հանդերձ ամենայն նաւուք իւրովք 'ի Սախրզ, տուեալ հողմոյն ուղղակի զառագաստսն, եւ յոտն յորդեալ զշաւիղ գնացից նաւուց 'ի կողմանցն Զանախ Խալէի, որոց 'ի հասանելն՝ տեսեալ իփսարացի ապստամբք Յոյնք՝ որք պաքարեալ էին զՍախրզ, 'ի բուռն զօրութենէ այլազգեացս երկուցեալք դարձան եւ ետուն զնաւս իւրեանց՝ եւ զինքեանս 'ի փախուստ, եւ հազիւ ճողոպրեալ անկան երամովին 'ի յանքոյթ վայրս։

Արդ՝ բարւոք զմտաւ առցէ բարեսէր ընթերցողդ, թէ 'ի փախուստ հալածելն ապստամբից, զի՞նչ ինչ ո՞չ դիպաւ 'ի գլուխ խղճալի եւ տառապեալ անձանց Յունաց, որք բնիկ բնակիչքն էին Սախրզին, եւ որո՞ց ո՞չ հաղորդեցան անձինք նոցա սրախողխող սպանմանց՝ զորս ունիմք ճառել սլարկեշտասէր եւ խղճահար լրսողիդ։

Եւ արդ՝ մինչ տեսին այլազգիք զփախուստ նոցա, ո՞չ հետեւեալ զկնի նոցա, քանզի չէին կարողք առնել ինչ, ուստի թափեցան ամենայնքն ելեալք 'ի նաւուց՝ հրաման եւ 'ի խափիտանէն ընկալեալք՝ յանձնէ ունելով զմեծ ոխակալութիւն, այնուհետեւ որոց եւ պատահէինն 'ի քաղաքին ընդ սուր անցուցանէին զչափահաս զարս, զբարեհասակ ծերս, եւ զզառամեալ զանցեալս աւուրքք, եւ 'ի տունս տունս իւրաքանչիւրոցն ամենեցուն մտեալք, զզօղեալս 'ի գուբս եւ 'ի կարասս՝ հանէին կտրատէին, եւ 'ի մասունս մասունս բաժանէին, եւ որք 'ի փախուստ միտէին յահէ մահուանն՝ արագընթաց զհետ մտեալ՝ ըմբռնէին կապէին եւ կամ առ տեղեաւն սպանանէին, եւ լցաւ քաղաքն ծաղկազարդ մահահոտ արեամբ, առուք արեանց բացան, քարինք մայթից յարենէ լուացան, եւ հուր բարկութեան այլազգեաց վառեաց եւ սպառեաց զամենայն կեանս Յունաց, եւ այսպէս անշուք յաւերակս դարձաւ բազմամարդ եւ մեծագանձ քաղաքն պանծալի։

Իսկ զկանայս նոցա զմատաղատունկս, զդստերս նոցա զուարթատեսիլս, զօրիորդս նոցա զառագաստաճեմս, զուստերս նոցա զծաղկահասակս, եւ զամենայն վայելչութիւնս նոցա ածին 'ի գերութիւն, եւ զինչս եւ զստացուածս նոցա յափշտակեցին, զկահ եւ զկարասի նոցա զխոշորս՝ Հրէից վաճառեցին, եւ բազում աւարաւ եւ գերութեամբ բազումք դարձան 'ի Պոլիս։

Եւ ո՞ ժուժկայէր 'ի լալոյ յաւուրս մտից նոցա 'ի քաղաքս, քանզի լցեալ զմանկամարդս 'ի նաւակս նաւակս եւ բերէին վաճառէին 'ի դիւրագին ծախս, եւ լցան տունք ամենեցուն գերութեամբ, եւ այսոցիկ աղէտից հագորդ գտան անձինք մեր տեսանել՝ մանաւանդ զգերիսն՝ զորս երամ երամ զտեռ ընդ դլխով արկեալ՝ ոմանք դնէին, ոմանք վաճառէին, զայսոսիկ ամենայն տեսին աչք մեր, եւ զգործս անտեղիս, զորս լռեմ ասել, եւ թողում դատել խոհեմամետ լսողիդ[13]։

Բայց 'ի վերայ այսր ամենայնի՝ դեռ խափտան փաշայն կայր 'ի սահմանս Սախրզու, եւ զայս անհնարին կոտորած լուեալ իփսարացւոց եւ չումլճացւոց, իբրեւ զկայծակն հրով սրտմտութեան լցեալ՝ հասին պաշարեցին զնաւն խափտան փաշայի 'ի վրէժխնդրութիւն Յունաց, եւ ողջամբ զնաւն՝ եւ կենդանւոյն 'ի նաւի լցեալ զգունդ զինուորացն գքսիւն հանգերձ լափեցին 'ի հուր, եւ զայլսն ցիր եւ ցան կացուցին, եւ հատուցին զհատուցումն նոցա նոցին[14]։

Այս լուր փոթալի հասեալ 'ի Պոլիս՝ այլ իմն եղանակաւ 'ի բերանս այլազգեաց շրջէր, իբր թէ 'ի ձեռս իւրեանց գործեալ այս գործ, եւն. եւն., որք բնաւին անտեղիք։

---

13 1822 թ. մարտ—ապրիլին Թուրքական զորքերը ներխուժեցին ապստամբած Քիոս կղզի։ Նրանք այրում և ավերում էին բոլոր քաղաքներն ու գյուղերը։ Կղզու 110 հազար բնակչությունից կոտորածներից հետո մնացել էր ընդամենը 10 հազար։ Շուրջ 25 հազար մարդ սպանվեց, 45 հազարից ավել՝ գերի ընկան։ Օտար թերթերը հաղորդում էին, որ Քիոսում կոտորեցին 200 ազնվատոհմ ընտանիքների և 80 բարձրագույն հոգևորականների (Տե՛ս Шпаро. Указ. соч., с. 64; Г. Л. Арш. Тайное общество «Филики Этерия». М., 1965, с. 111):

14 1822 թ. հունիսի 18-ին հունական երեք հրկիզանավեր տղզային հերոս Կոնստանտինոս Կանարիսի գլխավորությամբ, մտան Թուրքական նավերի դասավորության մեջ, Քիոսից ոչ հեռու Օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքերը տոնում էին իրենց մահմեդական տոնը, Կանարիսը շրթայակցեց իր հրկիզանավը նավատորմապետի նավին և հրկիզեց այն։ Հրդեհի մեջ այրվեցին շուրջ 2 հազար Թուրքեր իրենց խափտան փաշա Ղարս Ալիի հետ միասին (տե՛ս Шпаро. Указ. соч. с. 81—82; Арш. Тайное... с. 112):

Այս լինէր յորժամ այլազգիք 'ի ծոմս իւրեանց կային. մեք վերստին 'ի խոովութիւնս յուզմանց սրիկայիցն վշտացեալ հեծեծէաք, եւ օր 'ի վերայ աւուր 'ի թշուառութիւն դադարէր կեանք մեր, որոց լռութեամբ եւ գոհութեամբ ասնէաք եւ տոկայաք, զի վերստին վերացուցին զգլուխ, եւ սկսան վատ քան զառաջինն ընդ բայէս մրցիլ՝ կեղեքել, եւն. եւ պայրամն ի վերայ հասեալ՝ լրանային ամենայն աւուրք տօնից նոցա։

Ապա աչք մեր 'ի բարձունս առ Աստուած՝ օգնութիւն մեզ ժամանիլ ժէաք, իսկ որովհետեւ ոչ իսպառ մոռանայ Տէր զաղաղակս տնանկաց, եւ թէ՝ համբերութիւն նոցա մի՛ կորիցէ իսպառ, առ գութ շարժեալ գթացաւ ի մեզ յատուկ մարդասիրութեամբն իւրով Աստուած, քանզի մինչ լրացան աւուրք տօնից նոցա՝ յաւուրն վեցերորդի 'ի մեծազօր տէրութենէ յանկարծակի սպառնալի եւ ահարկու հրաման յամենայն օճախլըս հասանէր, կալնուլ կապել առնուլ տանել 'ի բանտ բերդականս՝ եւ իսկոյն խեղդամահ սատակել զամենայնսն, որոց ոտք յապստամբութիւն եւ 'ի յանօրէն անիրաւութիւնս ընթացան եւ ընթանան։

Սկսան ապա առ հասանիլ հրամանի արքային եէնիչէրի աղասին եւ օճախլը վարպետք ամենայնքն, կոչեցեալք որք 'ի զինուորապետութիւնս, եւ յոան կային հարիւրիւ չափ, յիսունիւ չափ, գունդ գունդ ընդ մէջ քաղաքիս 'ի շրջիլ, ուստի որոց եւ պատահէին ապստամբ սրիկայիցն՝ ըմբռնէին կապէին 'ի Հիսաբ բերդն առաքէին, եւ կամ 'ի Զնաան խաբու, եւ կամ յայլ տեղիս տանէին, եւ կտտամահ առանց ինչ պատասխան տալոյ եւ առնլոյ խեղդէին՝ եւ 'ի ծով ծփեցուցանէին զդիս նոցա, եւ որք ընդդէմ դառնային կամաց, եւ հակառակէին 'ի դիմամարտութիւն չտալ զանձն 'ի ձեռս, առ տեղին ընոսա մահացուցանէին, որպէս 'ի դուռն Պալատու պարանաւ առ հրապարակաւ պատահեցաւ՝ զոր խեղդեցին։

Եւ այս ամենայն որ եղեւ՝ յայտնի իմն սքանչելիք Աստուծոյ, եւ ամենազօր կարողութեան իւրոյ ողորմութեան էր տեսիլ, որ գթացեալ 'ի վերայ տառապելոցս՝ ապրեցոյց զմեզ 'ի սրոյ, եւ անձրեւ ողորմութեան եւ փրկութեան տեղեաց յանձինս մեր, եւ բուսոյց զմեզ 'ի վերստին կենդանութիւն։

Եւ այս սրտաբեկ ահարկութիւն որ արկաւ զապստամբսք սրիկայիցն՝ շատք 'ի նոցանէ աճապարեալ հասին 'ի տունս տունս՝ եւ փակեցան ընդ հովանաւոր թագստեանն, պակուցեալք յահէ սպառնալի մահուն, եւ զերեւելի երեւելի յանդգնսն յապարասան սրիկայիցն՝ բարձին զկեանս 'ի միջոյ։

Եւ ապա ղեստ խաղաղական տարածութեան առ հասարակ 'ի վերայ քաղաքիս հովանաւորէր, եւ շաւիղք գնացից պողոտայից յորդէին յապահով երթեւեկութիւնս, եւ այն ինչ յառաջինն որ խլացուցանէին զականջս մեր ձայնք հրարձակ թնդմանց, իսպառ ապա սպառեցան, եւ հատին զշունչս օդատանջս։

Եւ որք ստանձնեալ ստգտանէին, եւ ապախտ զհրամանաց մեծազօր տէրութեանն լինէին, խոնարհեցան այնուհետեւ եւ հնազանդեցան, եւ յիդափոխեալ 'ի զայլադէմ գիշատմանց վարուց՝ 'ի հանդարտ բարս մուծան, իբր զկենդանի ընտելացեալ 'ի վայրենական խոժոռական բարուց, եւ յամենայն գնացից գործոց, որ անվայելուչ եւ անիրաւ։

Եւ մեր ապա 'ի վերայ այսոցիկ բարեպսակ խաղաղութեան՝ իբր 'ի մահաբեր քնոյ գարթուցեալ, ոգի առաք, շնչաւորեցաք, եւ բացաւ դուռն աներկիւղ շրջելոյ, եւ իրաքանչիւր ոք 'ի գործս ձեռաց վաստակոց վասն աղքատիկ ապրուստի սկիզբն առին գնալ՝ օրհնելով զԱրարիչն արարածոց զԱստուածն ամենայնի, եւ փառս նմա մատուցանելով, եւ մաղթել վասն գթած թագաւորին մերում, շնորհել զկեանս հանդերձ խաղաղութեամբ, ամէն։

Եւ արդ զայս դիպուած եւս արժան դատեցաք գրել՝ եւ հմուտ առնել զեղելութենէն զսիրելի ընթերցողդ։

Յետ աւերածոյն Սախրզի, եղեւ զի յաւուր միում գիր իմն աղեկսկիծ աղերսանաց՝ յունական տառիւք 'ի լեզու հագարացի գրեցեալ՝ հասանէր 'ի ձեռս Սրբազան Պատրիարքի՝ յորում գրեալ էր այսպէս։

«Մեք չորեքին անձինքս ծառայք Տէրութեանդ ազգաւ եւ կրօնիւ Հայ գոլով՝ զմեզ ընդ Յոյնս վերածին գերեվարք մեր 'ի Քիոսէ՝ եւ ածեալ բերեալ վարէին զմեզ աստ 'ի գերութիւն. արդ չունելով մեր յոյս եւ ճար յուստեքէ փրկութեան՝ 'ի ձեռաց արանց անիրաւ գերչաց, առ ամենախնամ Սրբազան հայրդ մեր պաղատանօք ձգիմք զի զհոգիս մեր եւ զմարմին փրկեսցես 'ի կորստենէ մերմէ յայսմանէ, եւ եթէ ո՞չ աճապարեսցէ Սրբութիւն ձեր ձեռն տալ մերս ազատութեան 'ի բռնութենէ տանջանացս, զորս ածեն 'ի վերայ մեր ունողքն զմեզ, եւ յանհնարին ստիպմանց՝ ըստ բարուց բարբարոս գործոց նոցա, հոգիք մեր ընդ մարմինս մեր գլորին յանբերելի՝ վիհս կորստեան, եւ 'ի գուբ թաղին աղջամղջին գեհենի»։

Եւ զայս չորս անձինս՝ զոր յիշէր էին մայր եւ որդիք, երկուքն յորդւոց աղջիկ կոյս, զուարթատես եւ մանկամարդ, մանաւանդ թէ հասեալ 'ի չափ ամուսնական իրաւանց, գեղեցիկք եւ շնորհատեսք, եւ մին արու մանուկ 'ի չափ երկոտասան ամաց ժամանեալ անմեղ եւ սիրուն, ընդ որս եւ մայր սոցա կին միջակահաս եւ վայելչագեղ։

Արդ առ այս աղերս աղէտալի թախանձանաց նոցա, 'ի զուիթ փրկութեան շարժեալ, ընդ մէջս զգօտի արի վաստակաց ածեալ, հնարս փրկութեան սոցա խորհեցաւ Սրբազանն, զի փրկեսցէ զնոսա՝ որպէս օրէն Հայրական գթոյն պահանջէ, 'ի ձեռաց մարդախանձ գիշատողաց, եւ ազատեսցէ զնոսա 'ի նոցին գերութենէ, վասն որոյ վաղքաջ քան 'ի վաճառ մտանելն նոցա, արդ արար 'ի Դուռն հզօր տէրութեանն այսպէս։

«Յազգէս Հայոց զչորս անձինս 'ի Սախրզէ ընդ Յոյն գերիսն ածեալ են նաւամարտիկ զօրքն անգիտաբար եթէ իցէն Հայք, եւ արդ իբրեւ դերի վաճառեն, որում չի՛ք հրաման հզօր տէրութեանդ, եթէ յազգէս Հայոց ըմբռնեալքն գերեսցին. աւասիկ աղաչեմք հրամայել, զի տացեն զնոսա յազգս մեր»։

Զայս արդ լուեալ 'ի Դուռն տէրութեան, հրամայեալ էր գնալ 'ի դատն շէրիի իւրեանց, եւ 'ի դատաստան վասն իրացս մտանել, եւ 'ի դատաւորէն տեսանել զհայցուածոց մերոց կատար։

Ուստի Սրբազանն զոմանս 'ի հաւատարիմ արանց յազգէ մերմէ առաքէր մտանել 'ի խնդիր հարցմանց եւ պատասխանւոյ առաջի դատաւորին։

Այս նուագ մինչ ներկայացան մերայինք ընդ առաջ դատաւորին, եւ գերեվարքն ածին գլորեսինսն, եւ կացուցին առաջի ատենի հարցեալ թէ յո՞ր կրօնս կայցեն, եւ նոքա ըստ գրութեան իւրեանց որ առ մեզ, եւ ըստ ճշմարտութեան վկայեցին զինքեանց լինել Հայ՝ յազգէ Հայոց սերեալ, ուստի եւ մերայինք հաստատեալ զբանս իւրեանց՝ եւ վասն արձակման նոցա պայման առին՝ յետ երից աւուրց դարձուցանել առ մեզ։

Այսու աւետեաք եւ խնդութեամբ մեծաւ հասեալ 'ի Պատրիարքարան՝ ծանուցանէին Սրբազանին, որ թէպէտ ըստ ուշի մտերմութեան եւ խորին խորհրդոյն 'ի կասկածանս մտանէր յաղագս յամեցման կամ միջոց ձգելոյ նոցա, այլ կամայ ակամայ հարկ լինէր լռել, եւ համբերաբար բերել 'ի վախճանն, որպէս եւ 'ի գերեւ եհան զմեզ 'ի յուսոյ մերմէ այս աւուրք յապաղմանց։

Քանզի անդէն առ լրանալ աւուրցն՝ զլանային գերեվարքն տալ զգերիսն ասելով՝ թէ նոքա Յոյնք են՝ եւ 'ի Յունաց սերունդք, զի եւ յաւուրս միջարկեալս այսպէս լսէաք՝ թէ բազում գանս եւ հարուածս եւ տանջանս կուտեալ էին 'ի գլուխ կնոջն ուրանայ զազգն իւր, եւ թէ խօսիլ՝ յորժամ ներկայ լինին յատենի՝ լինել յազգէ Յունաց, յորմէ եւ բան հաստատութեան առեալ բռնանային տալ մեզ, վասն որոյ բողոք առ ատեան դքսի մուրաֆայ լինիլ բարձին մերս՝ յինք։

Եւ յաւուրն չորեքշաբթի յանդիման կացին մերայինք, եւ մատուցին դերեվարքն դկինն և զորդիս նորա ընդ նմա, եւ հարցեալ վագրյէն զինչ էն, և վերարերեալ դրանն 'ի վերայ կնոջ հարցանէր՝ թէ յորմէ՞ ազգէ իցէ, նա յայնժամ կինն կամ ի սնոտի երկիւղէ ստիպման, կամ 'ի նախապաշարմանէ, կամ 'ի ցանկութենէ անցաւոր փառաց (թէպէտ ոչ 'ի բոլոր սրտէ) պատասխանէ՝ թէ Յոյն եւ 'ի ցեղէ Յունաց եմ ես ընդ իս և որդիքս իմ։

Զայս լուեալ մերայնոց՝ որք անդ կային՝ զահի հարեալ ընդ երեսս իրերաց պշուցեալ մնային, առ որ հարցանէր դարձեալ վագրյէն, արդ եթէ դու և որդիք քո Յոյնք էին, ընդէ՞ր յառաջին նուադին վկայեալ ես զանձնէդ լինել Հայ, առ որ յաւել պատասխանի կինն՝ թէ երկիւղ դերութեանս. և վիշտք տառապանացս ստիպեցին զիս յայնժամ խօսիլ այնպէս, իսկ եթէ այժմ ճշմարտութեան խնդրէք հասու լինել՝ եւ գիտել զինէն՝ Յոյն եմ ես եւ Յոյն հանգերձ մանկամբքս այսոքիք։ Զայս առ լսելն բազմականաց՝ և մեր և նոցա կողմանց դհաստատ վկայութիւն, հանին յերեսաց ատենէ զմերայինսն մեծաւ ամօթով, թէ ազգդ եւ դուք ստախօս էք, եւ 'ի վերայ ստութեան դնէք դանձինս ձեր 'ի վկայութիւն, զի ահա բացայայտ խոստովանի զազգն իւր կինն՝ լինել Յոյն։

Եւ այսպէս կամաւ ելին 'ի փրկութենէ կինն եւ որդիքն ընդ նմա, քանզի եթէ ճշմարիտն վկայեալ էին առ ժամայն հասանէր անձանց նոցա փրկութիւն, ուստի զարմացեալ մերայնոց 'ի վերայ դարձուածոցն՝ դարձան 'ի դատաստանէ ախուր դիմօք, և ձեռս ամփոփեցին 'ի յինքեանս, զի հատաւ բանն, եւ խղաւ յոյս ազատութեան նոցա։

Արդ այս բանք 'ի զգուշութիւն ապագայիցդ գրեցաւ, զի մի՛ ձեռն ոք ձգեսցէ յայսպիսի գործ ինչ, զի մի՛ դամօթէ հարեալ անուն ազգիս մասամբ իւիր արատեսցի, զի բան գիւրասահ եւ միտք անհաստատ զերախտաւորս իւր անդոսնէ, և հուսկ ուրեմն 'ի ծանակելիս թշնամանէ։

Արդ՝ 'ի սոյն ամի՝ որ 1822, յորում այս իրագործութիւնք սոյն վերոգրեալ դիպուածոց պատահեցան, մեք ոչ իսպառ յուսաբեկ լեալ վարանէաք՝ թէ զի՞ արդ հնարք՝ որ վասն սոցին փրկութեան, ելին 'ի ձեռաց մերոց, ուստի հանապազօր զԱստուած աղաչէաք եւ լռիկ ցաւէաք, եւ հնարս անգամ զնոցին փրկութենէ ո՛չ դադարէաք, բայց ըստ որում վտանգաւոր՝ եւ ոչ յայտնի պահանջման դատաստանաւ զանձինս մեր 'ի վտանգ արկանել համարձակէաք, որ ո՛չ է գործ խոհեմութեան։

Իսկ Աստուած որ լսողն է աղօթից, եւ մերձ է առ նոսա որք կարդանն առ նա, նստեցեալ յաղերս երկուց կողմանց՝ ետ զշնորհս իւր 'ի սիրտս գերելոցն հաստատուն կալ 'ի հաւատս իւրեանց, եւ անշարժ մնալ 'ի հաստատութենէ յուսոյն փրկութեան։

Իսկ թէ եւ ասիցէ ոք աստ, թէ ընդէ՞ր ապա յայտնապէս յատենի խոյս տուեալ են նոքա լինիլ յազգէս Հայոց։

Առ այդմ պատասխանւոյ խնդիր առաջարկման յիրաւի եւ մեք 'ի սկզբանն՝ տարակուսէաք, բայց մինչ Աստուծով եղեւ նոցին ազատութիւնն, յայնժամ յայտնեցան լուծան գաղտնիքն, քանզի ճշմարիտ պատմէին գերիքն զանձանց իւրեանս զտադնապ վշտացն՝ զորս կրեալ էինն 'ի ձեռանէ նեղչաց իւրեանց գերեվարաց՝ զի առաջի Սրբազան Պատրիարքի աղեկոկեալ սրտիւ եւ կականմամբ աղիողորմ արտասուօք բացեալ նոյն խղճալի գերիքն զբերանս իւրեանց մի առ մի յայտնի խօսեցան զցաւս իւրեանց եւ զանցսն՝ զորս կրեալքն էին, գանհնարին տառապանացն ասեմ եւ զբազում զանակոծ խոշտանգանացն, մինչ՝ եւ զաւուր պարէնն արդելուլ 'ի նոցանէ, եւ նուագեալ պահելով շարշարել՝ եւ յոգիս ապաստան կացուցանել զնոսա։

Եւ այսոքիք յաղագս այնր՝ զի մի՛ երբէք ասիցեն յատենի լինել Հայ. ոյր սակս առ ահին ակամայ բռնադատեալ բանիւ միայն զոլ Յոյն իխրար տուեալ են։

Այլ Աստուած որ քննողն է սրտից գաղտնեաց, տեսեալ թէ ո՛չ 'ի սրտէ անտի է հրաժարումն նոցա, ողորմութեամբն իւրով եւ յետ այնորիկ պա-

հեաց զնոսա անխախտ 'ի հաւատս, եւ 'ի վերայ ճշմարտութեան անշարժ մնալով իբր ամիսս երկուս կամ երիս 'ի ձեռս գերշաց իւրեանց, յորում ժամանակի եւ բազում բանիւք ստիպեալ են զնոսա ուրանալ զհաւատս, եւ տեսեալ թէ չի՛ք յոյս գարձման եւ ոչ միում 'ի նոցանէ 'ի ոչնս իւրեանց, եւ յետ բազում ողոքանաց սպառնալեաց խոստմանց մեծութեանց եւ փառաց՝ թէ ոչ երբէք թուլանան 'ի կամաց, եւ ոչ հաճին կամաւ 'ի կամս իւրեանց՝ վասն որոյ յուսահատեալ եւ սրտմտեալ, յարգ օտասին հանեալ զնոսա գերեվարքն յայտնի բանիւ տուեալ վկայութիւն զնոցանէ, թէ սոքա ճշմարիտ Հայք են ազգաւ, եւ մեզ ապա ծանուցին, զոր 'ի լսել մեր փառս Աստուծոյ տուեալ, եւ որում ոդձայրն կաթոգին սիրով Սրբազան Պատրիարքն մեր՝ եհաս փափաքանացն, վասն որոյ ցան եդեալ ազատեաց զնոսա՝ թէ եւ բազում որամոց ծախիւք գնացիցն, եւ դասեցան յազգս եւ 'ի հաւատս ճշմարիտս Հայաստանեայցս եկեղեցւոյ. փա՜ռք անճառ մարդասիրութեանն Աստուծոյ։

ԱՄԷՆ։

ՕՏԱՐ (ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԵՆ) ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ազ(ի)լ (azl)—պաշտոնանկ, պաշտոնազրկում, դահընկեցություն

Ազ(ի)լ արարել—պաշտոնազրկել

Աղա խաքուսի (aga kapısı)— ենիչերիների հրամանատարի նստավայրը

Արալըք իսկէլէսի (aralık İskelesi) – միջանկյալ նավամատույց

Արզ (arz)—խնդրագիր, աղերսագիր

Արզ օտասի (arz odasi)—ունկնդրության սենյակ, որտեղ սուլթանը կամ մեծ վեզիրը ընդունում են լսել իրենց հպատակին

Եալը (yali)—ծովափնյա առանձնատուն

Եամակճի (yamakci)—ենիչերի զինվոր

Զապիթ (zabit)—սպա

Զարպխանէ էմին (zarbhane emin)—փողերանոցի կառավարիչ, հսկիչ

Էլաթէ հարպի (alâti harbive) – պատերազմական գործիք

Էշրէֆ (eşref)—աղնվագույն

Ըզէհլի (irzehli) — պարկեշտ, պատվական, համեստ

Թադրիր (takrir)—զեկուցագիր

Թաթար (tatar)—հեծյալ փոստատար

Թաշոս—Թասոս կղզի

Թէզքէրէ (tezkere)—նամակ, կոչ

Թէրսխանէ (tersane)—նավաշինարան

Թէրսխանէ էմին (tersane emini) —նավաշինարանի կառավարիչ

Թիւֆէնկ (tüfenk)—հրացան

Թոփխանէ (tophane)—թնդանոթարան

Իքրար (ikrar)—երդում, խոստովանում, որոշում

Իմրահոր (imrahor)—ախոռապետ

Լոզոֆէթ (logofet) —լոգոֆետը (լոգոթետը) կառավարում էր պատրիարքի արքունիքը։ Նրա պարտականությունների մեջ էին մտնում նաև Պատրիարքարանի հարաբերությունները Բ. Դռան հետ

Խաթթիշէրիֆ (hattiserif)—նվիրական կամ բարձր հրաման, սուլթանական ֆերման

Խալբախ (kalpak)—մորթե գլխարկ

Խափ(ի)տան բաշայ (kaptan paşa)—Օսմանյան կայսրության ծովային ուժերի հրամանատար, ծովակալ

Խոճակեան (Hocagan) — դիվանի պաշտոնյա
Նազարեկ — Գրիգոր (Հայիրեկ)
Հարբաքի (harbacti) — հասարակ գինովոր
Գալաս — Գալաց (քաղաք Ռումինիայում)
Ճեպհանէ (cebhane) — գինանոց
Մեստ (mest) — սեկ կոշիկներ
Միւպաշիր (mübaş r) — պատվիրակ
Միսելլիմ (müselliin) — պաշտոն ստանձնող, փոխարինող, փոխկառավարիչ, տեղապահ
Մուրաֆայ (muraf'aa) — դատավեճ, հայց
Նալիպ (nalib) — մահմեդական դատավոր, կուսակալ նախիջևանում
Նէֆէր (nefer) — հետևակի հասարակ գինվոր
Շուրութ (şürut) — պայման, կարգ
Չամլճայ — Իկրա կղզի
Չաուշ (çavus) — կրտսեր հրամանատար
Չաուշ պաշի (çavus başi) — չավուշների պետը, գլխավորը։ Դիվանում կատարում էր արարողական, արտաքին գրագրության, որոշումներ իրագործման պարտականությունները։
Պաքինոս — Պաքմոս կղզի
Պակալ (bakkal) — նպարավաճառ
Պարութխանէ (baruthane) — վառոդի գործարան, պահեստ
Պարութխանէ էմին (baruthane eminl) — վառոդի գործարանի կառավարիչ
Պէզէստէն (bezesten) — ծածկած շուկա
Պուղաան — Մոլդովա
Պույրուլթու (buyrultu) — հրամանագիր
Պոստանճի (bostanci) — պարտիզպան, արքունի պահապան գինվոր
Պոստանճի պաշի (bostanci baş) — պոստանճի հրամանատարը, սուլթանի անմիջական թիկնապահը։ Արքունիքում կարևոր և բարձր պաշտոններից մեկն է։
Սախրդ — Քիոս կղզի
Սամուր (samur) — սամույր, սամույրի մորթի
Սատրանէ բայա տրրլար էրմէնիլէր (sadıkane raya dırlar ermeniler) — հավատարիմ է հայկական բայան
Մէմէնտրէկ — Սամոթրակն կղզի
Սու Եոլճի (su yolci) — ջրմուղագործ վարպետ
Սուսամ Ատասի — Սամոս կղզի
Վաքը (vakı) — պատահար, եղելություն
Վարոլ (varil) — տակառ, բարել
Տեսրոթ (ὁ θεσπέσιος) — հողևորական, քահանա, տվյալ դեպքում՝ հունական եկեղեցու մետրապոլիտ
Տէֆտէրխանա (defterhane) — հաշվապահական գրասենյակ
Տինիսլամ (dinislam) — իսկական մահմեդական
Տիւան թէրճիմանի (divan tercümanl) — Բարձր Դռան թարգմանիչ, կատարում էր արտաքին գործերի նախարարի օգնականի պարտականությունները, սովորաբար նշանակվում էր ֆանարիոտների թվից։
Ռէիզ էֆէնտի (reis efendi) — Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար
Փաշայր (pasalı) — փաշայի ծառա
Քարու քեահէասի (kapu kahyası) — վալիի կամ ինքնավար իշխանությունների ներկայացուցիչ արքունիքում
Քէաթիպ (kâtib) — գրագիր
Քեահեայ պէյ (kahya bey) — Բ. Դռան նախարար, որը գլխավորապես զբաղվում էր կայսրության ներքին գործերով

Քէֆիլ (kefil)—գրավաթուղթ

Օճախ եէնիչէրեաց (yeniçeri ocakı) —կայսրության զորատեսակները բաժանվում էին ըստ օջախների և ունեին իրենց հրամանատարները

Ֆազիլէթլի (faziletli)—առաքինի, արժանի

НОВОВЫЯВЛЕННЫЙ АРМЯНСКИЙ ДОКУМЕНТ О ГРЕЧЕСКОЙ РЕВОЛЮЦИИ 1821—1829 ГОДОВ

А. А. ОВАКИМЯН

Резюме

В архиве Конгрегации мхитаристов в Вене обнаружена рукопись под названием «История восстания молдовского бея и греческих страданий», в которой пером современника и очевидца описаны события первых двух лет греческой революции. Предполагается, что автором рукописи является армянский историк и педагог Аветис Перперян. Основное содержание «Истории» посвящено погромам греков в Константинополе и других центрах Османской империи, чудовищной резне на острове Хиос в апреле 1822 г. Рукопись является важным первоисточником по истории греческой революции.